2010, ՀՈՒՆԻՍ Բ, ԹԻՎ 12 (320)

# Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գումարվեց ԵՀԽ «Հավատք եւ կարգ» հանձնախմբի գործադիր վարչության ժողովը



Հունիսի 21-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում իր աշխատանքն սկսեց Եկեղեցիների համաշխարհային խորհրդի «Հավատք եւ կարգ» հանձնախմբի գործադիր վարչության հնգօրյա ժողովը, որ Սբ Էջմիածնում էր գումարվել Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերով: Ժողովին մասնակցում էր քրիստոնեական տարբեր Եկեղեցիների 31 անդամ: Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցին ներկայացնում էին Տ. Նաթան եպս Հովհաննիսյանը եւ Տ. Շահե աբղ. Անանյանը:

Ժողովի ընթացքում առանձին աշխատանքային խմբերով քննության առնվեցին «Եկեղեցու առաքելությունը եւ բնույթը», «Եկեղեցական իշխանության աղբյուրները» եւ «Եկեղեցիների բարոյական խնդիրները» նյութերը:

Հանձնախմբի անդամներն այցելեցին Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, եղան Խորվիրապի վանքում, Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, ծանոթացան Հայոց եկեղեցու կրթադաստիարակչական եւ սոցիալական ծրագրերին:

Հունիսի 21-ին հանձնախմբի անդամներին ընդունեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի վարիչ Տ. Հովակիմ եպս Մանուկյանը Նորին Սրբությանը ներկայացրեց հանձնախմբի գործադիր վարչության անդամներին, անդրադարձավ Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցու եւ միջեկեղեցական կազմակերպությունների, մասնավորապես՝ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի միջեւ առկա ջերմ հարաբերություններին ու համագործակցությանը:

Այնուհետեւ հանձնախմբի մոդերատոր, մետրոպոլիտ Վասիլիոսը (Կիպրոսի Ուղղափառ Եկեղեցի), շնորհակալություն հայտնելով Վեհափառ Հայրապետին՝ ջերմ հյուրընկալության համար, ներկայացրեց հանձնախմբի առաջիկա անելիքները, հանձնախմբի վերակազմավորման հետ առնչված հարցերը:

Ապա հյուրերին իր օրհնությունն ու գնահատանքը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ բարի գալուստ մաղթելով նրանց համայն հայության հոգեւոր կենտրոն: Նորին Սրբությունը հանձնախմբի անդամներին ներկայացրեց Հայոց եկեղեցու ներկայիս իրավիճակը, մարտահրավերները եւ գործունեությունը՝ տարբեր ոլորտներում: Վեհափառ Հայրապետը մասնավոր անդրադարձ կատարեց միջեկեղեցական հարաբերություններին՝ մաղթելով, որ Աստծո սերը ներկա լինի դրանցում եւ միավորի Քրիստոսի Ս. Եկեղեցին: Հայոց Հայրապետը նաեւ գոհունակությամբ նկատեց, որ վարչության անդամների ներկայությունը Հայաստանում առիթ կտա ճանաչելու Հայ Եկեղեցին եւ հայոց հոգեւոր կյանքը, ինչպես նաեւ կքաջալերի հավատավոր հայորդիներին եւ կզորացնի նրանց հավատը:

Վերջում Նորին Սրբությունը պատասխանեց եկեղեցականների հարցերին:



## Ամենայն Հայոց Կաթողիկոսը մասնակցեց Ուղղափառության միջխորհրդարանային համաժողովի 17-րդ կոնֆերանսի բացման արարողությանը

Հուլիսի 28-ին Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովում տեղի ունեցավ Ուղղափառության միջխորհրդարանային համաժողովի 17-րդ կոնֆերանսի բացման արարողությունը, որին մասնակցեց եւ համաժողովի մասնակիցներին իր հայրապետական օրհնությունը բերեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Համաժողովին մասնակցում էր 16 երկրի շուրջ 70 պատվիրակ:

Մինչ բացման արարողությունը համաժողովի մասնակիցները ծաղիկներ դրեցին 1999 թ. հոկտեմբերի 27-ի ոճրագործության զոհերի հիշատակը հավերժացնող հուշակոթողին:

### Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ ՈՒՂՂԱՓԱՌՈՒԹՅԱՆ ՄԻՋԽՈՐՀՐԴԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ 17-ՐԴ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ԲԱՑՄԱՆ ԱՌԻԹՈՎ

(Երեւան, 28 հունիս, 2010 թ.)

Հարգելի՛ խորհրդարանականներ,

Մենք ուրախ ենք ողջունելու ձեզ Հայոց հինավուրց հողում՝ քրիստոնեական առաջին երկրում, որը Տիրոջ խաչի առջեւ խոնարհվել է դեռեւս 301 թ.: Սա միայն հյուրընկալության ուրախություն չէ, այլեւ ուրախությունն այն գիտակցումի, որ տեղի է ունենում հանդիպում ի Քրիստոս եղբայրների եւ արդիական շատ հարցերում համախոհների: Մենք հավատում ենք, որ այս հանդիպումը՝ որպես շարունակություն Աթենքում, Սոֆիայում, Երուսաղեմում եւ Պատմոս կղզում կայացած նման ժողովների, եւս օգտակարություն կունենա ներկա աշխարհի համար վճռորոշ հարցերի պատասխանների փնտրման ճանապարհին:

Պետական գործիչների՝ մասնավորաբար օրենսդիրների համար արդիական կարեւորագույն խնդիրներից մեկն առնչվում է աշխարհիկ պետության գաղափարի հետ: Այսօր Եկեղեցու՝ պետությունից տարանջատվածության հասկացությունը հաճախ ընկալվում է երկու հաստատությունների՝ միմյանց բացառման սկզբունքով, ինչը հանգեցնում է կրոնական հաստատություններից պետական կառույցների եւ որ ավելի ցավալի է, պետական գործիչների օտարացմանը: Ավելին, իշխանության մարմինների, ինչպես եւ իշխանությունը կրող անձանց մեջ հիշյալ միտումը հանգեցնում է հոգեւոր կրոնական հարցերի նկատմամբ անտարբերության ձեւավորմանը: Հարցերի, որոնք ծագում են ամեն քայլափոխի վրա եւ այսպես թե այնպես գտնվում են հետնախորքում այն խնդիրների, որոնք պետությունը փորձում է լուծել: Մենք համոզված ենք, որ անհնար է աշխարհիկ հարցերի լիարժեք վճռումը, երբ պետությունն ու նրա ծառայողները բաժանված են այն կրոնական հիմքից, որը ձեւավորել է հոգեւոր աշխարհը եւ նկարագիրը ժողովրդի, ում կյանքի ուղին նրանք կոչված են որոշելու եւ ում ձգտումները նրանք պետք է իրագործեն: Այդ պատճառով Մեզ համար հատկապես արժեքավոր է, որ համաժողովը միավորել է այն քաղաքական գործիչներին, ովքեր անտարբեր չեն կենսական այդ խնդիրների հանդեպ ոչ միայն պետության համար ավանդական եղող քաղաքական, տնտեսական, ընկերային եւ այլ համարժեք ասպարեզներում, այլեւ հոգեւոր ասպարեզում: Գնահատելի է, որ համաժողովը միավորել է խորհրդարանականների, ովքեր մեկտեղում են քաղաքականությունը եւ հավատքը, օրենսդրական գործունեությունը եւ աստվածահաճո ջանքը՝ իրենց երկրների գերագույն օրենսդիր մարմիններում հոգեւոր աշխարհընկալման ներդրման եւ քրիստոնեական ավանդական արժեքների ամրապնդման:




Անգնահատելի է համաժողովի գործունեությունը քրիստոնյա հինավանդ ժողովուրդների միավորման հարցում: Տարբեր երկրների խորհրդարանականների հաղորդակցումը համաժողովի շրջանակներում արդեն նախադրյալ է, գուցե եւ՝ նույնիսկ երաշխիք խաղաղության եւ եղբայրության համար այդ երկրների միջեւ, ուրեմն եւ՝ նշանակալի ներդրում ողջ մարդկության՝ վիթխարի հոգեւոր տարածության մեջ: Կարծում ենք նաեւ, որ այսպիսի հանդիպումներն ու փոխադարձ շփումները պիտի նպաստեն մեր ժողովուրդների միջեւ անհասկացողությունների եւ թյուրընկալումների հետեւանքով երբեմն առաջացող լարվածությունների ու տարաձայնությունների հաղթահարմանը: Այս առումով Մեր խոսքը վերաբերում է հայ- վրացական եկեղեցական փոխհարաբերություններին, ի մասնավորի՝ Վրաստանի հայոց թեմին իրավաբանական պատշաճ կարգավիճակ տրամադրելու եւ հայկական եկեղեցիները թեմին վերադարձնելու խնդիրներին, ինչպես նաեւ հույն եւ հայ պատրիարքությունների միջեւ Երուսաղեմում պարբերաբար ծագող անհասկացողություններին, որոնք վստահ ենք, եւս հնարավոր պիտի լինի հարթել երկխոսության եւ փոխադարձ հասկացողության եղբայրական ոգով:

*Շարունակությունը՝ էջ 2*

# Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ ...

*Սկիզբը՝ էջ 1*

Հայ Առաքելական եկեղեցուն մեծապես հուզող խնդիրներից է նաեւ քրիստոնեական ավանդական արժեքների հասարակական լայն շրջանակներում ներգրավվածությունը, այն է՝ աշխարհում հոգեւոր գործոնի դերակատարության բարձրացումը, մշակույթում եւ ամենօրյա կյանքում քրիստոնեական ընկալումների ամրապնդումը, կրոնական մոլեռանդության հաղթահարումը, համաշխարհայնացման համահարթեցնող վտանգների դիմագրավումը: Մեզ հավասարապես հուզող խնդիրներից է նաեւ կրոնական եւ ազգային փոքրամասնությունների, ազգերի ինքնորոշման իրավունքների պաշտպանությունը, որոնք տարբեր կերպով արտահայտված են Սերբիայի, Կիպրոսի եւ այլ հարցերում համաժողովի պաշտոնական փաստաթղթերում: Հիշյալ դիրքորոշման հետ է կապված այն իրողությունը, որ 1996 թ., երբ դեռ ոչ մի միջազգային կազմակերպություն չէր համարձակվում տեսնել Ղարաբաղը ինքնուրույն միավոր, համաժողովն առաջինն էր, որ Աթենքի կոնֆերանսի մասնակիցների թվում ներառավ նաեւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պատվիրակությանը:



Անհնար է թերագնահատել համաժողովի որոշումը՝ դուրս գալ Եվրոպայի աշխարհագրական սահմաններից եւ ներառել իր կազմում Ասիայից, Ավստրալիայից, Աֆրիկայից պատգամավորություններ, որոնք մասնակցում են համաժողովի աշխատանքներին 2001 թվականից: Այդ որոշումը թելադրված է գիտակցությամբ, որ համաժողովի համար առաջնահերթ խնդիրները համամարդկային են, եւ որ դրանց լիարժեք վճռման համար անհրաժեշտ է ներառել նաեւ այդ շրջանների քրիստոնեական եկեղեցիները, ինչպիսիք են Ասորական, Եթովպական, Ղպտի, Մալանկարա եկեղեցիները, որ միավորված են Հայ Առաքելական եկեղեցու հետ Հին կամ Արեւելյան ուղղափառության ընտանիքում: Մեր նպատակների նույնության մասին վկայում է եւ այն, որ Մեր եւ Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ Պատրիարքի կողմից այս տարվա մարտին ստորագրված Համատեղ հռչակագրում հատկապես ընդգծված է կարեւորությունը քրիստոնեական հավատքի եւ նրա վրա հիմնված արժեքների տարածման, կարեւորությունը աշխարհի համար վճռորոշ միջքրիստոնեական եւ միջկրոնական հաղորդակցության զարգացման, անհրաժեշտությունը ջանքերի համատեղման՝ դիմակայելու քրիստոնեական ավանդական երկրներում կեղծ կրոնական շարժումների ներխուժմանը, կանխելու համար վնասաբեր եւ քայքայող գործողությունները տարբեր աղանդների:

Վերստին արտահայտելով Մեր ուրախությունը այսօրվա հանդիպման առիթով՝ հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում համաժողովի անդամներին՝ մաղթելով, որ Աստված աջակից լինի ձեզ՝ պսակելու ձեր աշխատանքները նոր ձեռքբերումներով եւ առաջընթացով: Մեր աղոթքներն ենք առաքում առ Բարձրյալը հայցով՝ հուշելու ուղիներ եւ առաջնորդելու այդ աշխատանքներն Իրեն հաճելի, ուրեմն եւ՝ միակ ճշմարիտ ուղղությամբ:

## Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ավստրիայի արտաքին գործերի նախարարին

Հունիսի 25-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ավստրիայի եվրոպական ու միջազգային հարցերի դաշնային նախարար Միխայել Շպինդելեգերի գլխավորած պատվիրակությանը:

Ողջունելով պատվիրակությանը՝ Նորին Սրբությունը նկատեց, որ նախարարի այցը լավագույն վկայությունն է այն ջերմ հարաբերությունների, որ առկա են երկու ժողովուրդների եւ երկրների միջեւ: Հայոց Հայրապետը նաեւ գոհունակություն հայտնեց Ավստրիայի հայ համայնքի նկատմամբ ցուցաբերվող հոգատարության համար՝ նշելով, որ հայ համայնքի առկայությունը կարեւոր խթան է փոխհարաբերությունների զարգացման ճանապարհին:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց Հայաստանյայց Առաքելական եկեղեցու խորհրդային տարիներին եւ հայրենիքի անկախացման շրջանում, ինչպես նաեւ ներկա կրթական եւ սոցիալական ոլորտներում եկեղեցու գործունեությանը:

## Հոգեհանգստյան արարողություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Հունիսի 27-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մատուցվեց Պատարագ: Պատարագի ավարտին, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ հունիսի 19-ին ԼՂՀ Պաշտպանության բանակի շփման գոտում տեղի ունեցած դիվերսիոն հարձակման ընթացքում զոհված 4 հայ զինծառայողների հոգիների հանգստության համար:

*«Սիրելի՛ հավատացյալ հայորդիներ,*

*Վշտացյալ եւ տրտմյալ հոգիներով այս պահին հոգեհանգիստը կատարեցինք մեր այն չորս զավակաց հոգիների հանգստության համար, ովքեր հայրենի սահմանների պաշտպանության նվիրական գործում ծառայողական իրենց պարտքը կատարելիս զոհվեցին ադրբեջանական կողմի տմարդի եւ նենգ հարձակման ժամանակ: Աղոթք բարձրացրեցինք՝ հայցելով երկնավոր Տիրոջը, որ Իր լուսեղեն օթեւաններում ընդունի հոգիները մեր անմեղ չորս զավակների եւ Սուրբ Հոգու մխիթարությունը պարգեւի նրանց վշտակիր հարազատներին:*

*Սիրելինե՛ր,*

*Քաջալերվելով ու գոտեպնդվելով ամոքեցեք ձեր վիշտն ու ցավը կորստի, որ միայն ձերը չէ, այլ ողջ ժողովրդինը, որովհետեւ զոհվածը միայն անհատ ծնողի զավակը չէ, այլ նաեւ ազգի, հայրենիքի զավակն է, որ իր կյանքը պսակեց նահատակության պսակով հայրենիքի սիրույն համար: Միաժամանակ հպարտության զգացումը թող լինի ձեր հոգիներում, որովհետեւ դուք տվեցիք զավակներ ազգին ու հայրենիքին, ովքեր հայրենյաց սահմանների անդորրի պահպանության համար նվիրեցին իրենց կյանքը: Առաքյալի խոսքով ասած՝ մահը ոչինչ է, եւ ձեր զավակները հաղթեցին մահվանը իրենց նահատակությամբ՝ դառնալով բարի օրինակը արիության ու հայրենիքի հանդեպ անմնացորդ սիրո ու նվիրումի՝ մեր ժողովրդի զավակաց համար:*

*Մեր հորդորն ու պատգամն է ձեզ, որ Սուրբ Հոգու մխիթարությամբ մխիթարված ու գոտեպնդված, առանց ընկճվելու եւ տրտմելու, հպարտությամբ, բարձր ու պարզ ճակատով շարունակեք ձեր կյանքի ընթացքը՝ հաստատ համոզումով, որ մեր քաջարի չորս զոհյալ զավակները հավիտենապես կապրեն բոլորիս հոգիներում:*

*Թող Բարձրյալն Աստծո Աջը միշտ հովանի լինի ձեզ վրա, եւ Սուրբ Հոգու սերը, շնորհն ու խաղաղությունը լինեն ամենքիս հետ այժմ եւ հավիտյանս. ամեն»,-* հոգեհանգստյան արարողությանը ներկա զոհվածների հարազատներին դիմելով՝ հորդորեց Վեհափառ Հայրապետը:

## Հունիսի 19-ը՝ Երեւանի մայր եկեղեցու ուխտի օր

Հունիսի 19-ին Հայաստանյայց Առաքելական Սբ եկեղեցին տոնախմբեց սբ Գրիգոր Լուսավորիչ Հայրապետի նշխարները գտնելու տոնը:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ տարիներ առաջ այս տոնը հռչակվել է Երեւանի Սբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցու ուխտի օր:

Այդ օրը Տիգրան Մեծ պողոտայից ուխտավորների թափորը շարժվեց դեպի մայր եկեղեցի, ուր մատուցվեց Պատարագ: Պատարագից հետո եկեղեցու բակում տեղի ունեցավ տոնական համերգ՝ մասնակցությամբ Մայր Աթոռի հայորդյաց տների սաների, ապա կատարվեց մատաղի օրհնություն: Միջոցառումների ավարտին Խորվիրապի վանքի Լուսավորչի կանթեղից բերված լույսը բաժանվեց ժողովրդին:



## Տ. Գարեգին արք. Պեքճեան վերահաստատուեցաւ որպէս Գերմանիոյ Հայոց առաջնորդ

26 եւ 27 յունիս տեղի ունեցաւ Գերմանիոյ Հայոց թեմական պատգամաւորական հերթական ժողովը՝ նախագահութեամբ առաջնորդ Տ. Գարեգին արք. Պեքճեանի: Ժողովին ներկայ գտնուեցան գերմանահայոց եկեղեցական համայնքներու ընտրեալ պատգամաւորները, ինչպէս նաեւ հոգեւորականաց դասը, թիւով՝ 39 պատգամաւորներ:

Երկօրեայ նիստերու ընթացքին թեմական-պատգամաւորական ժողովը քննարկեց օրակարգային զանազան հարցեր: Պատգամաւորներուն ներկայացուեցաւ առաջնորդարանի գործունէութեան 2009 թուականի տեղեկագրութիւնը, ինչպէս նաեւ նիւթական հաշուետուութիւնը:

Ներկայացուած նիւթերու շուրջ տեղի ունեցան բաց, աշխոյժ եւ օգտակար քննարկումներ, յայտնուեցան եւ մշակուեցան զանազան առաջարկութիւններ, որոնք յանձնուեցան Թեմական խորհուրդին ապագայ



քննարկումներու եւ ի պահանջել հարկին գործադրութեան համար:

ԹՊԺ-ը մասնաւոր ուշադրութեամբ քննարկեց մանաւանդ հայ երիտասարդ նոր սերունդին հոգեւոր եւ հայեցի դաստիարակութեան, անոնց առաջնորդարանի անդամակցութեան, առաջնորդարանի եւ համայնքներու մէջ անոնց դերակատարութեան հարցերը: Գոհունակութեամբ ընդգծուեցաւ, որ ԹՊԺ-ի երկօրեայ նիստերուն իրենց մասնակցութիւնը կը բերեն տարբեր համայնքերէ ժամանած երիտասարդ պատգամաւորներ եւ այլ հիւր երիտասարդներ, որոնց առիթ տրուեցաւ արտայայտելու իրենց կարծիքը, տեսակէտն ու սպասելիքները: Ներկայ երիտասարդները իրենց հաւատարմութիւնն ու սէրը յայտնեցին Հայ եկեղեցւոյ վերաբերեալ՝ եկեղեցին նկատելով իրենց ինքնութեան կարեւորագոյն մէկ մասը:

Առաջնորդ սրբազանն ընդգծեց, որ երիտասարդութեան ներգրաւումը գերմանահայ մշակութային եւ եկեղեցական կեանքէն ներս է եւ կը մնայ թէ առաջնորդարանին եւ թէ հայկական միւս կազմակերպութիւններու կարեւորագոյն մարտահրաւէրներէն մէկը եւ պատրաստակամութիւն յայտնեց այս ուղղութեամբ շարունակելու առաջնորդարանի համագործակցութիւնը հայկական բոլոր շահագրգիռ հաստատութիւններու հետ:

Առաջնորդ Գարեգին սրբազան եւ Թեմական խորհուրդի ատենապետ Սարգիս Քէհեաեան պատգամաւորներուն տեղեկութիւններ փոխանցեցին անցեալ հոկտեմբեր ամսուն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ Ամենայն Հայոց Կաթողիկոսին հրաւէրով եւ նախագահութեամբ տեղի ունեցած թեմական-ներկայացուցչական ժողովի եւ անոր ընթացքին ընդունուած որոշումներու մասին: Նշուեցաւ, որ Մայր Աթոռին մէջ տեղի ունեցած ժողովին հիմնական նպատակն էր քննարկել եւ Վեհափառ Հայրապետի հաստատման ներկայացնել թեմական նոր կանոնադրութեան ուղենիշները, որոնց հիման վրայ Հայ եկեղեցւոյ բոլոր թեմերը յառաջիկայ երկու տարիներու ընթացքին պիտի մշակեն թեմական նոր կանոնադրութիւններ եւ ներկայացնեն Հայոց Հայրապետի վաւերացման:

ԹՊԺ-ի երկրորդ օրը տեղի ունեցաւ թեմակալ առաջնորդի հաստատման փակ եւ գաղտնի քուէարկութիւնը՝ պաշտօնավարութեան յետագայ եօթը տարիներու համար՝ համաձայն թեմական կանոնադրութեան տրամադրութիւններուն:

Ըստ քուէարկութեան՝ Գարեգին արք. Պեքճեան վերահաստատուեցաւ առաջնորդական պաշտօնավարութեան յաջորդ ժամանակաշրջանին համար:

Սրբազանը յայտնեց իր պատրաստակամութիւնը շարունակելու առաջնորդական իր պաշտօնը եւ հրաւիրեց բոլորին միասնական ու ներդաշնակ ծառայութեամբ լծուիլ աշխատանքի՝ ի սպասաւորութիւն Աստուծոյ եւ ի բարօրութիւն մերազն ժողովուրդի:

*Դիւան Առաջնորդարանի*
*28 Յունիս 2010*

## Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հինգ միաբան կմեկնի ուսման

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մի շարք միաբաններ իրենց աստվածաբանական ուսումը կշարունակեն արտերկրի տարբեր բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Ըստ այդմ՝ Տ. Հովնան վրդ. Հակոբյանը եւ Տ. Հովհաննես աբղ. Սահակյանը կուսանեն Ամերիկայի Միացյալ Նահանգների Ս. Հովհաննես համալսարանում, Տ. Եղիա աբղ. Խաչատրյանը՝ Փարիզի Կաթոլիկ համալսարանում, Տ. Նշան աբղ. Հմայակյանը եւ Տ. Հակոբ աբղ. Գրիգորյանը՝ ԱՄՆ-ի Ս. Թովմաս Աքվինացի համալսարանում:

Ուսումնառությունից հետո հիշյալ միաբաններն իրենց ծառայությունը կշարունակեն Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցու թեմերում եւ այլ կառույցներում:

# ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ 300-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՏՈՆԱԽՄԲՈՒԹՅՈՒՆՆԵՐ





Հունիսի 19-ին Սանկտ Պետերբուրգում, հայ համայնքի հաստատման 300-ամյակի տոնախմբությունների շրջանակներում, Հայ Առաքելական Եկեղեցու, ՀՀ գլխավոր հյուպատոսության եւ Հայ ազգային մշակութային ինքնավարության ջանքերով, Սալտիկով-Շչեդրինի անվան ազգային գրադարանում տեղի ունեցավ հայկական ձեռագրերի եւ հին տպագիր գրքերի ցուցադրության բացումը: Ներկա էին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպս Ներսիսյանը, փոխվարչապետ Արմեն Գեւորգյանը, արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը, էկոնոմիկայի նախարար Ներսես Երիցյանը, ֆինանսների նախարար Տիգրան Դավթյանը, Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, Սանկտ Պետերբուրգում ՀՀ գլխավոր հյուպատոս Վարդան Հակոբյանը, Սանկտ Պետերբուրգի Հայ ազգային մշակութային ինքնավարության խորհրդի նախագահ Կարեն Մկրտչյանը եւ այլք:

Բացման խոսքով հանդես եկավ Սալտիկով-Շչեդրինի անվան ազգային գրադարանի տնօրենի պաշտոնակատար Անտոն Լիխոմանովը: Նա ներկաներին շնորհավորեց հայ համայնքի հաստատման 300-ամյակի առթիվ, ապա պատմեց գրքերի հայկական հավաքածուի ստեղծման, Սանկտ Պետերբուրգում նախորդ երեք դարերի ընթացքում գործած հայկական տպագրատների եւ լույս տեսած հայալեզու պարբերականների մասին եւ տեղեկացրեց, որ արդեն պատրաստ է հայալեզու գրքերի էլեկտրոնային քարտադարանը:

Այս գրադարանում պահպանվում են 100-ից ավելի հայերեն ձեռագրեր եւ մոտ 64 000 տպագիր գրքեր, ամսագրեր եւ քարտեզներ: Այստեղ պահպանվող ամենահին ձեռագիրը քառավետարանի հատվածն է, որը վերագրվում է 11-12-րդ դարերին:

Այնուհետեւ հայ համայնքի ներկայացուցիչներն ու հյուրերը ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի եւ ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւի գլխավորությամբ այցելեցին Սանկտ Պետերբուրգի պետական համալսարան: Համալսարանի ռեկտոր Նիկոլայ Կրոպաչյովը ներկաներին պատմեց համալսարանի կայացման գործում հայ գիտնականների ունեցած մեծ ներդրման մասին:

Հանդիպման ընթացքում Երեւանի եւ Սանկտ Պետերբուրգի պետհամալսարանների միջեւ ստորագրվեց համագործակցության ծրագիր, ինչպես նաեւ համալսարանի ականավոր գիտնականների դիմանկարների սրահում կատարվեց Վիկտոր Համբարձումյանի եւ Արմեն Թախտաջյանի դիմանկարների բացման արարողությունը: Բարձրաստիճան հյուրերը եղան նաեւ Հովսեփ Օրբելու՝ առաջիկայում կառուցվելիք հուշարձանի հիմնաքարի մոտ:

ՀՀ նախագահն այցելեց նաեւ Սբ Կատարինե հայկական եկեղեցի: Եկեղեցում գոհաբանական աղոթք վերառաքելուց հետո Եզրաս սրբազանը նախագահ Սարգսյանին ներկայացրեց եկեղեցու եւ եկեղեցապատկան շինությունների վերանորոգման, համայնքային կառույցների գործունեության եւ առաջիկա ծրագրերի մասին:

Նախագահ Սերժ Սարգսյանը, շնորհավորելով Սանկտ Պետերբուրգի հայ համայնքին հոբելյանի առիթով, կարեւորեց համայնքի ձեռքբերումները, հայերի մասնակցությունը Ռուսաստանի պատմության մեջ:

Ընդունելության ժամանակ ՀՀ նախագահը Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպս Ներսիսյանին պարգեւատրեց «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» II աստիճանի շքանշանով, Սանկտ Պետերբուրգի Հայ ազգային մշակութային ինքնավարության խորհրդի նախագահ Կարեն Մկրտչյանին եւ ՌԴ վաստակավոր արտիստուհի, «Սանկտ Պետերբուրգի պալատներ» միջազգային երաժշտական փառատոնի գեղարվեստական ղեկավար Մարիա Սափարյանցին՝ «Մովսես Խորենացի» շքանշանով:

Հոբելյանի առթիվ տեղի ունեցավ նաեւ առաջնորդական օրհնության գրերի, պարգեւաբաշխության եւ պատվոգրերի հանձնման արարողություն: Առաջնորդ սրբազան հայրն օրհնության եւ գնահատանքի գրեր էր հղել Սբ Կատարինե եկեղեցուն կից առաջնորդարանի երկրորդ հարկի՝ մշակութային կենտրոնի սրահի վերանորոգման աշխատանքների բարեգործներ Կարեն Մկրտչյանին, Յուրի Սարգսյանին, Գագիկ Զախարյանին, Էդուարդ Գասպարյանին, Արմեն Մկրտչյանին, Իգոր Ջավադովին, Ալեքսանդր Քոչարովին, Սամվել Մովսիսյանին, Միքայել Ֆիլիկյանին, Յուրի Բաբայանին եւ Նորայր Պողոսյանին:

ՀՀ Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը հայ ինքնության պահպանման գործում նշանակալից ավանդի, հասարակական բազմամյա ակտիվ գործունեության, Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման, հայ-ռուսական բարեկամական կապերի ամրապնդմանը ցուցաբերած օժանդակության համար համայնքի ակնառու ներկայացուցիչներին հանձնեց մեդալներ եւ պատվոգրեր:

ՀՀ Սփյուռքի նախարարության ոսկե մեդալներով պարգեւատրվեցին Հայ Առաքելական Եկեղեցու հոգաբարձուների խորհրդի նախագահ Վյաչեսլավ Լազարյանը եւ եկեղեցու հոգաբարձուների խորհրդի անդամ Յուրի Սարգսյանը, «Արշիլ Գորկի» մեդալով պարգեւատրվեց ՌԴ վաստակավոր նկարիչ, Սանկտ Պետերբուրգի նկարիչների միության վետերանների խորհրդի նախագահ Զաքար Խաչատրյանը, «Վիլյամ Սարոյան» մեդալով պարգեւատրվեց Սանկտ Պետերբուրգի Հայ Առաքելական Եկեղեցու «Հավատամք» թերթի գլխավոր խմբագիր, ՀՀ գրողների, ՀՀ լրագրողների եւ ՌԴ նկարիչների միությունների անդամ Արմեն Մերուժանյանը:

ՀՀ Սփյուռքի նախարարության պատվոգրեր հանձնվեցին համայնքի թվով 21 ներկայացուցչի:

Ռուսաստանի Հայերի միության փոխնախագահ, Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի հոգաբարձուների խորհրդի փոխատենապետ Գեորգի Տեր-Ղազարյանցը միության անունից հուշամեդալներ հանձնեց Սանկտ Պետերբուրգի եւ Հյուսիսարեւմտյան տարածաշրջանի հայ համայնքի հոգեւոր հովիվ Տ. Նշան աբեղա Պետրոսյանին, Սանկտ Պետերբուրգի Հայ ազգային մշակութային ինքնավարության խորհրդի նախագահ Կարեն Մկրտչյանին եւ ՀՀ Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանին:

*Սանկտ Պետերբուրգի ՀԱԵ*
*լրատվական կենտրոն*

# ՎԵՐԱՕԾՎԵՑ ՍՎԵՐԴԼՈՎ ԳՅՈՒՂԻ ՍԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻՆ



Հունիսի 19-ին՝ Սբ Գրիգոր Լուսավորիչ հայրապետի Նշխարաց գյուտի տոնին, հանդիսապետությամբ Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս Չուլջյանի, կատարվեց Սվերդլով գյուղի Սբ Գեւորգ եկեղեցու վերաօծման արարողությունը: Սրբազան հոր ձեռամբ եւ թեմի հոգեւոր դասի մասնակցությամբ օծվեցին սբ սեղանը, խորանը, մկրտության ավազանը: Արարողության ավարտին նորաօծ եկեղեցում Պատարագ մատուցեց Ստեփանավանի եւ տարածաշրջանի հոգեւոր հովիվ Վռամ աբեղա Ղազարյանը:

VI դարի Սբ Գեւորգ եկեղեցին ներկայումս գրեթե ամբողջական տեսքով է՝ շնորհիվ 19-րդ դարի վերակառուցողական աշխատանքների, որի ժամանակ հավելվել է նաեւ եկեղեցուն կից զանգակատունը: 2009 թ. եկեղեցին վերանորոգվեց Գուգարաց թեմի առաջնորդարանի եւ «Վորլդ Վիժն» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի՝ Ստեփանավանի տարածաշրջանի գրասենյակի համաֆինանսավորմամբ:



Համայնքի համար բացառիկ իրադարձություն էր այս տոնախմբումը, քանզի յոթ տասնամյակ շարունակ հավատացյալները զրկված էին համատեղ աղոթելու հնարավորությունից:

Վերաօծման արարողության ավարտին թեմակալ առաջնորդն իր օրհնության ու շնորհավորանքի խոսքերն ուղղեց ներկաներին եւ պատգամեց խոնարհությամբ, հավատով եւ աղոթքով հարստացնել Տիրոջ տունը, սրբությամբ պահել վերաօծված աղոթատեղին: Ապա սրբազան հայրը «Վորլդ Վիժն» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի՝ Ստեփանավանի տարածաշրջանի գրասենյակի աշխատակիցներին նվիրեց օրհնության գիր:

Արարողությանը ներկա էին Տաշիրի եւ Ստեփանավանի հոգեւոր հովիվները, մարզային իշխանության ներկայացուցիչներ եւ բազմաթիվ հավատացյալներ:

Պատարագից հետո ներկաներին գյուղապետի կողմից մատուցվեց ավանդական մատաղը:

*Դիվան Գուգարաց թեմի*

# Հայ եկեղեցու համաշխարհային երիտասարդական կազմակերպության հերթական ժողովն Արմավիրի թեմում



2010 թ. հունիսի 24-ին տեղի ունեցավ Հայ եկեղեցու համաշխարհային երիտասարդական կազմակերպության (ՀԵՀԵԿ) թեմական երիտասարդական խորհուրդների ատենապետերի հերթական ժողովը:

Առաջին ժողովը ՀԵՀԵԿ-ի կենտրոնական գրասենյակում էր, երկրորդը՝ Գուգարաց թեմում:

Արմավիրի թեմի առաջնորդ Տ. Սիոն եպս Ադամյանի օրհնությամբ, ՀԵՀԵԿ-ի հայաստանյան պատասխանատու Սեդրակ քհն. Ազնավուրյանի նախագահությամբ, թեմական երիտասարդական խորհուրդների ատենապետերի հերթական՝ հունիս ամսվա ժողովը գումարվեց Արմավիրի թեմի առաջնորդարանում, որին, ցավոք, իրենց մասնակցությունն էին բերել միայն Արմավիրի, Շիրակի, Գեղարքունիքի, Գուգարաց, Արարատյան թեմերի պատասխանատուները:

Ժողովին հրավիրվել էին նաեւ Արմավիրի թեմի ծխական խորհուրդների պատասխանատուները եւ թեմի տարածքում գործող երիտասարդական մի շարք կառույցների ներկայացուցիչները:

ՀԵՀԵԿ-ի ատենապետ Կարեն Պետրոսյանը ներկայացրեց երիտասարդ կազմակերպության նպատակները, կատարված եւ կատարվելիք գործունեությունը եւ խնդիրները: Այնուհետեւ քննարկվեցին Եկեղեցուն առնչվող, ինչպես նաեւ երիտասարդին հուզող շատ հարցեր: Արմավիրի թեմի եկեղեցասեր երիտասարդների հոգեւոր պատասխանատու Տ. Մաշտոց քհն. Ստեփանյանը բարձր գնահատեց գրասենյակի կատարած աշխատանքները: Համաձայն երիտասարդների հետ հանդիպումների ժամանակացույցի՝ Սեդրակ քհն. Ազնավուրյանի եւ ԹԵԽ ատենապետերի նախնական համաձայնությամբ որոշվեց հաջորդ հանդիպումը գումարել Սյունյաց թեմում:

*Արմավիրի թեմի*
*երիտասարդաց միություն*

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ԴԱՎԻԹ Դ ՎԱՂԱՐՇԱՊԱՏՑԻ (1590-1629?)

*Սկիզբը՝ թիվ 4-11*

Այս ամբողջ շարադրանքի ընթացքում շեշտը դրված էր Մայր Աթոռի եւ Կ. Պոլսի պատրիարքության վրա, եւ մյուս աթոռները, մի տեսակ, դուրս մնացին ուշադրությունից: Աղթամարի կաթողիկոս Գրիգորիս Սեֆեդինյանը, որ 62 տարի կաթողիկոսեց, մահացավ 1610 թվին: Նրան հաջորդեցին Աբրահամը, Հովհաննեսը, Ներսեսը եւ Ստեփանոսը: Սակայն, մյուս կողմից, Խիզանում գրված մի հիշատակարան Գրիգորիսին կաթողիկոս է հիշում 1626 թվին, ինչն իրար է խառնում ժամանակագրությունը: Այդ հարցի քննությունը թողնելով ուրիշներին՝ նշենք, որ Աղթամարի կաթողիկոսության վիճակը բարգավաճ չէր: Նշանավոր վարդապետներից հիշվում են Սիմեոն Ապարանցին, Կարապետ Վարագցին, Հովհաննես Խիզանցին, Հովհաննես Կրճոնը, Սահակ Վանեցին եւ ուրիշներ: Առաջինը եւ Սահակ Վանեցին աշակերտներ էլ ունեցան: Նրանցից էր Մելքիսեդեկ Վժանեցին, որին Մովսեսը հրավիրեց ուսուցանելու Հովհաննավանքի դպրատանը: Վարդապետները գործում էին, բայց Աղթամարի աթոռը գտնվում էր անշուք կացության մեջ: Աղթամարի վիճակներից էին Պողոս Մոկացի եւ Ներսես Մոկացի վարդապետները, որոնք արգասաբեր գործունեություն ծավալեցին Էջմիածնի թեմերում: Սյունիքից Հովհաննես Ծարեցի վարդապետը մեծ համբավ ձեռք բերեց: Նա մահացավ 1583 թվի հունիսի 20-ին: Հարկ է վերհիշել նաեւ Հայաստանի նշանավոր վարդապետներից Սրապիոն Եդեսացուն, Սրապիոն Օձտեղացուն, Սարգիս Պարոնտերին եւ Կիրակոս Պոնտացուն, որոնց մասին մենք արդեն վերը խոսել ենք:

Իր ամփոփ կյանքով էր ապրում Երուսաղեմի պատրիարքությունը: Այստեղ 32 տարի աթոռակալեց Գրիգոր Պարոնտերը, որն իր արդյունավետ գործունեությամբ աչքի ընկավ Երուսաղեմում 1613 թվականից: Ժամանակին Գրիգոր Կեսարացին նկատել էր նրա մեծ կարողությունները եւ դեռ աբեղա՝ նրան դարձրել էր մատակարար: Պարոնտերն իր գործունեությամբ պայծառ հիշատակ թողեց: Նրա անունը միշտ հիշվում է պատարագի ժամանակ՝ գոհության քարոզում: Երուսաղեմի ունեցվածքը եւ սրբատեղիները միշտ վեճերի առարկա են դարձել թե՛ մահմեդականների եւ թե՛ քրիստոնյաների կողմից: Վիճաբանության հարց են դարձել Սբ Հակոբյանց վանքը, ծննդյան այրը, համբարձման տեղը, պատանատեղի մոմերը եւ այլն: Հայկական վանքերի կառուցումը կամ նորոգումը նույնպես մեծ վեճերի դուռ է բացել: Պարոնտերը կարողացել է դրանք լուծել, վանքի պարտքերը փակել, եկեղեցական գույքը ճոխացնել, վանքը պայծառացնել, կարող վարդապետներին բարձրացնել, միաբանների թիվը մեծացնել: Նշանավոր վարդապետ էր Կարապետ Մոկացին, որը նրա կատարյալ աջակիցն էր: Նրան հաջորդեց Աստվածատուր Տարոնեցին, որը նույնպես լավ հիշատակ թողեց: Նա մահացավ 1645 թվին: Գրիգորն իր նպաստն է բերել Պալաթի եկեղեցու կառուցմանը, սակայն դա չի ապացուցվում այլ տեղեկություններով: Ըստ երեւույթին, ոչ թե նա էր, այլ Գրիգոր Դարանաղեցին: Գրիգոր Պարոնտերն իրերի բերումով հաճախ այցելել է սուլթանության մայրաքաղաք եւ ձեռք բերել արքունի հրովարտակներ եւ այլեւայլ արտոնություններ: Չի բացառվում, որ նա անձամբ Կ. Պոլիս չի էլ եկել, եւ հրովարտակները նրա համար ձեռք է բերել նրա բարեկամ Գրիգոր Կեսարացին:

Նշված ժամանակներում նոր վկաներ հայտնվեցին: 18 տարեկան Լույս անունով կաֆացի մի ազնվական երիտասարդ, որին Պարոնլույս կամ Լուսպարոն էին կոչում, մահմեդականների կողմից զրպարտվում է, թե իբր իսլամացել է Կեզլով քաղաքում եւ հետո կրկին վերադարձել քրիստոնեության գիրկը: Նրան դատի են տալիս 1567 թվի հունվարի 5-ին, սակայն դատավորը, տեսնելով զրպարտությունը, նրան ազատ է արձակում: Բայց քաղաքի իշխանի կարգադրությամբ նա կրկին ձերբակալվում է, ենթարկվում խոշտանգումների, եւ 4 ամիս շարունակ փորձում են նրան իսլամացնել: Ծնողները նրան փրկելու համար կաշառք են տալիս դատավորին ու իշխանին եւ անգամ դիմում Կ. Պոլիս: Լույսը չի հրաժարվում իր հավատից եւ 1567 թվի մայիսին գլխատվում է:

Մեզ հուզող ժամանակներում Միջագետքի Թլկուրան ավանում դատավոր էր Մեհմեդ անունով մեկը, որը մեծ տուրքեր էր սահմանել քրիստոնյաների համար: Քրիստոնյաները կարողանում են հրաման ստանալ թուրք զորավարից՝ ուղղված դատավորին, որ նա օրինական տուրքից ավելի չգանձի: Մեհմեդն էլ դիմում է Դիարբեքիրի դատավորին, որ ստանա նրա օժանդակությունը: Թլկուրանի գլխավորներն էլ են գալիս Դիարբեքիր, եւ Մեհմեդը հուսահատված դիմում է զրպարտության: Նա, երկու կեղծ վկա գտնելով, մեղադրում է նրանց, թե նրանք իրենց մեծերին ու դատաստանը հայհոյեցին: Հրաման է ստացվում անմիջապես ձերբակալել Թլկուրանի տանուտերերին: Ցասումը հիմնականում նրանցից երկուսի՝ Մարգարե սարկավագի եւ Շահրիման գյուղավագի դեմ էր: Այս երկուսին ստիպում են ուրանալ հավատը, իսկ սրանք հրաժարվում են՝ պատրաստ լինելով նահատակության: Մյուս օրը տանում են նրանց նահատակության վայրը եւ նավթով այրում: Դա եղավ 1580 թվի սեպտեմբերի 6-ին:

1592 թվին Կարինում նահատակվում է նաեւ Հովհաննես Դարանաղեցի եպիսկոպոսը: Սակայն նահատակության մասին մանրամասներ չեն պահպանվել: Նահատակվել են Աբրահամ Ուռհայեցի քահանան եւ Սքանդար կամ Ալեքսանդր Ուռհայեցի տանուտերը, որոնք գլխատվել են 1600 թվի հունվարի 22-ին Եդեսիայում՝ ջալալիների առաջնորդներից մեկի՝ Ղարա Յազըջիի հրամանով:

Շահ-Աբասի հետ կապված՝ պատմվում է, որ նա ծպտյալ 1620-ին պտտում է Փարիա եւ Բուրվարի գավառներում՝ կամենալով իմանալ, թե ինչ են մտածում հայ գաղթականներն իր մասին: Այստեղ նա մի հայ կնոջից գանգատ է լսում իր դեմ՝ իրենց հայրենիքից դուրս հանելու համար: Ավետիս քահանային իսլամանալու առաջարկ է անում, սակայն կոշտ պատասխան է ստանում: Նա խիստ զայրանում է եւ կարգադրում քահանայի գլխին կացնով հարվածել եւ անզգա վիճակում թլփատել: Նույնիսկ հրաման է տալիս այդ գավառի բոլոր հայերին իսլամացնել ու թլփատել: Հայերը ցրվում են շրջակա լեռները, իսկ մի մասն ստիպված իսլամանում է: Շատերին թլփատում են խոշտանգելով եւ ծեծելով: Նույն վիճակին է ենթարկվում Փահրան գյուղի տանուտեր Նուրիջանը, որը փորձել էր խանգարել գյուղի իսլամացումը: Շահին ասում են, որ հրամանը կատարված է, եւ նա լրաբերներին 40-ական ոչխար է տալիս եւ մարդիկ ուղարկում, որ հայերին իսլամ կրոնը սովորեցնեն:



Սակայն հայերը չեն ենթարկվում եւ անգամ մի քանի մոլլա են սպանում: Այս շփոթ վիճակը տեւում է 2 տարի, որը խիստ հուզում է Փարիայի Խոյիկյան գյուղի բնակիչ Գրիգորին, որը Վայոց ձորի Արփա գյուղից էր՝ հաղթահասակ մի մարդ՝ հավատի մեջ հաստատուն: Նա որոշում է վերջ դնել այս կացությանը եւ տարբեր գյուղերից վերցնելով 7 մարդ՝ գնում է Սպահան: Նա դիմում է ամեն միջոցի: Կաշառում է պաշտոնյաներին, աղերսագրեր է ուղարկում շահին եւ ի վերջո շահից հրաման ստանում, որ Փարիայի եւ Բուրվարիի հայերը համարձակորեն պաշտեն իրենց կրոնը: Նա կարողանում է հավաքել 1000 թուման եւ վճարել այն տուգանքը, որ պահանջել էր Շահ-Աբասը՝ իր շնորհի համար: Այդ գումարը վճարեցին, եւ երկու գավառի հայերը հայտնվեցին կարի աղքատության մեջ: Գրիգորի հաջողությունը շարժեց պարսիկների թշնամությունը: Նրանք Գրիգորի պարտեզ նետեցին իրենց կողմից սպանված մի մահմեդականի դին եւ սպանության մեջ մեղադրեցին նրան: Ազատվելու համար պայման դրվեց մահմեդականություն ընդունելը: Նա հաստատակամորեն մերժեց եւ գլխատվելով նահատակվեց: Դա մոտավորապես տեղի ունեցավ 1622 թվին:

*Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*
*ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,*
*պրոֆեսոր*

# Մեծ Ութնեակի-Քսանի Համաշխարհային Կրօններու խորհրդաժողով Կանադայում

Սոյն թուականի յունիսի 21-23 Կանադայի Ուինիպեգ քաղաքում տեղի ունեցաւ Համաշխարհային միջկրօնական համագումարը, որը կոչուած էր յունիս 26-30 Թորոնթոյում տեղի ունեցող Մեծ Ութնեակի եւ Քսանի տնտեսապես հզօր պետութիւնների քննարկելիք օրակարգի հարցերը քննութեան առնել եւ յանձնարարութիւններ կատարել այս ուղղութեամբ:



Համագումարին մասնակցում էին աշխարհի բոլոր կրօններից աւելի քան 100 ներկայացուցիչներ՝ քննելու երեք կարեւոր հարցեր. աղքատութեան դէմ պայքար, խաղաղութիւն եւ ապահովութիւն, բնապահպանութիւն, կենսոլորտ:

Սոյն համագումարին Մայր Աթոռ Ս. Էջմիածինը ներկայացնում էր Ամերիկայի Միացեալ Նահանգների Եկեղեցիների ազգային խորհուրդի նախագահ Վիգէն արք. Այքազեանը, ինչպէս նաեւ Կանադայի Եկեղեցիների խորհուրդի պատուիրակութեան անդամ, Կանադահայոց թեմի առաջնորդ Բագրատ եպս Գալստանեանը եւ առաջնորդարանի միջեկեղեցական եւ միջկրօնական հարաբերութիւնների բաժնի պատասխանատու Յակոբ սրկ. Արսլանեանը:

Ժողովին հրաւիրուած էր նաեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա՝ համակարգելու բնապահպանութեան նուիրուած հատուածը: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին ընկերակցում էին Սեպուհ արք. Սարգիսեանը, Խաժակ արք. Յակոբեանը, Գրիգոր ծ. վրդ. Չիֆթճեանը եւ Ժիրայր Պասմաճեանը:

Համագումարի փակման ընդունուած յայտարարութիւնն ուղղուած մեծ ութնեակի եւ քսանի երկիրների ղեկավարներին պաշտօնապէս յանձնուեց Կանադայի Պետական բարեփոխումների նախարար Սթիվըն Ֆլեթչըրին՝ փոխանցելու Գանատայի վարչապետ եւ մեծ ութնեակի եւ քսանի հիւրընկալ նախագահ Սթիվըն Հարփըրին:

*Կանադայի Հայոց թեմ*

# Մոնթեին նվիրված հուշ-երեկո Կալկաթայում

Հունիսի 23-ին հնդկահայոց հոգեւոր հովիվ, Հայոց մարդասիրական ճեմարանի կառավարիչ Խորեն աբղ. Հովհաննիսյանի հրավերով Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանում էր Կալիֆոռնիայի համալսարանի դասախոս, փիլիսոփայության դոկտոր Մարգար Մելքոնյանը, ով մասնակցեց եղբոր՝ ՀՀ եւ Արցախի ազգային հերոս Մոնթե Մելքոնյանին նվիրված՝ իր «Եղբորս ճանապարհը» գրքի շնորհանդեսին: Հեղինակը պատասխանեց ճեմարանականների հարցերին, որոնք վերաբերում էին նրա հրատարակած գրքին եւ Ավոյին: Ապա Մարդասիրականի սաներն արտասանեցին բանաստեղծություններ՝ նվիրված հերոսին:

Հանդիսության վերջում հայր Խորենը երախտագիտության ու գնահատանքի խոսք ասաց Մարգար Մելքոնյանին, ապա խոսեց Մոնթե Մելքոնյանի մասին՝ մեջբերելով մեծ զորավար Նապոլեոն Բոնապարտի այն միտքը, թե՝ սերը դեպի հայրենիքը քաղաքակիրթ մարդու առաջին արժանիքն է. «Մոնթեն օժտված էր այդ արժանիքով՝ հայրենասիրությամբ: Նրա մահ իմացյալ անմահությունը, անձնուրացությունը դարձան առհավատչյան մեր անկախություն ձեռք բերած հայրենիքի համար: Մոնթեի կյանքը սերունդների համար լինելու է դաստիարակչական այն լուսավոր կետը, որին պիտի հետամուտ լինեն նրանք»:



# ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ-125

## (1885-1920)

*Սկիզբը՝ թիվ 5-9, 11*

## «Երկիր Նաիրի»

Գիտենք արդեն, որ բանաստեղծն ապրում էր հայրենիքից հեռու: Եվ, ահա, շարքի առաջին բանաստեղծության մեջ նա իր վերադարձը դեպի հայրենիք նմանեցնում է հունական առասպելաբանությունից հայտնի հերոսի վերադարձին: Ինչպես Ոդիսեւսը քսան տարի թափառելուց հետո, Տրոյական պատերազմում հաղթելով, բազմաթիվ գայթակղությունների ու վտանգների դիմագրավելով, վերադարձավ իր թագավորություն՝ Իթակե, որն իր ծննդավայրն էր, որտեղ իրեն էին սպասում մահամերձ հայրը, առաքինի կինը, քսանամյա որդին, ահա այդպես էլ իր վերադարձն է ազդարարում բանաստեղծը:

Նրա առջեւ արդեն իսկ հայտնվել էր Ոդիսեւսի կերպարը «Ուրուների այս երկրում, որպես մի նոր Ոդիսեւս»: «Երկիր Նաիրի» շարքի առաջին բանաստեղծության մեջ Ոդիսեւսի կերպարը մի նոր խորհուրդով է կանգնում նրա առաջ.

*Որպես Լայերտի որդին, որպես*
*Ուլիս մի՝ թողած եւ հող, եւ տուն,*
*Անցա ծովեր ու ցամաքներ ես՝*
*Ամեն տեղ օտար եւ անխնդում:*

*Ու հոգնած քայլով ահա կրկին*
*Վերադառնում եմ հայրենի հող,*
*Դեպի քարերըդ ազնիվ ու հին,*
*Եվ խրճիթներըդ՝ ահով նիրհող:*

*... Ու կարոտակեզ ահա կրկին*
*Վերադառնում եմ, որ առհավետ*
*Ունկնդիր լինեմ քո հին երգին*
*Եվ լամ, լամ անուշ քո երգի հետ...*

Վերադարձի այս տրամադրությունն անմիջականորեն շարունակվում է «Կարծես թե դարձել եմ ես տուն...» բանաստեղծության մեջ, որը շարքում յոթերորդն է: «Կարծես» է ասում, որովհետեւ մտքով է նա տեղափոխվում հայրենիք: Բանաստեղծն իրեն մտաբերում է մանուկ տարիներին՝ մոր կողքին, երբ աշխարհը դրախտի էր նման: Անցած կյանքի հեքիաթը մի պահ պարուրում է նրան եւ հիշողությամբ ուժ տալիս ապրելու: Իրական մայրն այստեղ վերածվում է տեսիլքի մեջ հառնող հայրենիքի խորհրդանշանի.

*Կարծես թե դարձել եմ ես տուն,*
*Բոլորն առաջվանն է կրկին.*
*Նորից դու հին տեղը նստում,*
*Շարժում ես իլիկը մեր հին.*
*Մանում ու հեքիաթ ես ասում,*
*Մանում ես անվերջ ու արագ,*
*Սիրում եմ պարզկա քո լեզուն,*
*Ձեռքերդ մաշված ու բարակ...*
*Արեւը հանգչում է հեռվում,*
*Գետից բարձրանում է մշուշ,*
*Հեքիաթդ անվերջ օրորում,*
*Իլիկըդ խոսում է անուշ...*

Վերադարձի տրամադրություններն առկա են նաեւ «Այստեղ է լացել իմ մայրը...», «Հիշում եմ՝ ինչպես այն ուշ...», «Երանի՜ նրան, ով հայրենական / Խաղաղ հարկի տակ հանգչում է հիմա...» բանաստեղծություններում:

Իրեն նմանեցնելով առասպելական հերոսին՝ Ոդիսեւսին, Տերյանը, սակայն, գրում էր իրական հայրենիքի մասին: Նրա աչքի առջեւ էին հայոց գյուղերը, անտանելի վշտի մեջ կորած ժողովրդի տխուր երգերը, օտարներից նրա չհասկացվածությունը.

*Այնպես անխինդ են եւ նըման լացին*
*Երգերն իմ երկրի, այնպես տխրագին.*
*Մեզ չի՛ հասկանա օտարերկրացին,*
*Մեզ չի հասկանա սառն օտարուհին:*

*... Տեսնում եմ ահա գյուղերը մեր խեղճ,*
*Եվ թուխ դեմքերն այն տխրության սովոր.*
*Իմ ժողովուրդը անել վշտի մեջ,*
*Երկիրն իմ անբախտ եւ աղետավոր:*

Այս չհասկացվածության մորմոքը նա յուրովի շարունակում է «Չեմ հավատում ճիչերին ձեր ցնծագին...» գործում, որն ավարտվում է. ***«Ո՞վ է կանգնել պաշտպան երկրին իմ ավեր, / Ո՞վ է թարգման մեր դարավոր տանջանքին...»*** տողերով: Իսկ ռուս բանաստեղծ Վյաչեսլավ Իվանովին հասցեագրած բանաստեղծության մեջ պարզ ու որոշակի ասում է. ***«Արդյոք «հարյա՛վ» պիտի երգե՞ս / Վառված ու որբ երկրիս համար...»***:

Եվ այս ամենն այնպիսի պայմաններում, երբ ժողովուրդն ապրում էր իր փորձության պահը: Մի կողմից բանաստեղծը տեսնում էր մահվան գիշերվա խտացումը, ամբողջ մի ժողովրդի անելանելի կացությունը, մյուս կողմից համատարած անհուսության մեջ հույսի ճրագներ էր վառում: Մահվան մեջ ասես նրան պատկերանում է հարության առասպելը, հակառակ դեպքում չէր գրի անմար հավատի, սուրբ ուղու եւ վեհ պսակի մասին:



Տերյանը տող առ տող գծում եւ ուրվագծում է հայրենիքի կերպարը. ***«Հայրենիքում իմ արնաներկ / Գիշերն իջավ անլույս ու լուռ...»***: Այնտեղ, ուր հազարամյակներ քաղաքակրթությունն էր եւ այդ քաղաքակրթությունն ստեղծած ու կրող ժողովուրդը, հիմա փլատակներ են.

*Ամեն մի միտք՝ հիմա մի վերք,*
*Ամեն հայացք՝ հատու մի սուր.*
*Արնոտ դիերն են համր ու մերկ*
*Նայում երկինք անզոր ու զուր...*

Այս պահի համար են ասես նրա տրիոլետներից մեկի տողերը. ***«Օ՜, կըզգան օրեր ավելի տրտում / Ու դժնի, դժնի, առավել դժնի...»***: Նույնը նաեւ ***«Անհանգիստ է հոգիս ու տրտում... / Ես տեսնում եմ աղետ ու արյուն... / Ես տեսնում եմ ավերն ամենի / Ահավոր փլատում եւ անկում...»*** տողերի մեջ:

Ժողովուրդն անզոր է, երկիրը՝ անարգված: Պատմական անցյալի հերոսական փառքին հակառակ կանգնում է իրական Հայաստանի եւ իրական հայ մարդու կերպարը: Բանաստեղծը ոչ թե փախչում է հայրենիքի թշվառ վիճակից կամ վերացական խորհուրդներ տալիս, այլ կանգնում նրա կողքին, ինչպես որդին կկանգներ վիրավոր ծնողի կողքին, որպեսզի եթե կարող է՝ ամոքի նրա վերքերը, եթե չի կարող՝ գոնե լսի վերջին խոսքը: Բայց ներքին մի ուժ անընդհատ պահում է նրան: Այդ ուժը հայրենիքի անմեռ ոգին է, որը վերածվում է պատրանքի եւ տեսիլքի նման կանգնում նրա առջեւ.

*Մշուշի միջից,- տեսի՜լ դյութական,-*
*Բացվում է կրկին Նաիրին տրտում.*
*Ո՞ր երկրի սրտում թախիծ կա այնքան,*
*Եվ այնքա՞ն ներում - ո՞ր երկրի սրտում...*

Ահավոր դժոխքի մեջ Տերյանը գրում է հայրենիքի դյութական տեսիլքի եւ անպարտության մասին՝ փորձելով ոտքի հանել վերջին պաշտպաններին, ոգեւորել հերոսամարտի ելած հերոսներին:

Իր ժողովրդի օրհասական պահը բանաստեղծին մղում է վերջին զգացողության, վերածվում անհուսալի տագնապների եւ ծնունդ տալիս «Մի՞թե վերջին պոետն եմ ես...» ողբերգական բանաստեղծության: Չհասկացվածության եւ կորսվածության ծանր ապրումները նորից վարագուրում են փրկության հույսի առկայծումները, եւ Տերյանն անամոք ցավով գրում է այս եղերական տողերը.

*Մի՞թե վերջին պոետն եմ ես,*
*Վերջին երգիչն իմ երկրի,*
*Մա՞հն է արդյոք, թե նի՞նջը քեզ*
*Պատել, պայծա՛ռ Նաիրի:*

*Վտարանդի, երկրում աղոտ,*
*Լուսե՛ղ, քեզ եմ երազում.*
*Եվ հնչում է, որպես աղոթք,*
*Արքայական քո լեզուն...*

Վերջի չարագուշակ զգացողությունն ուղեկցում է բանաստեղծին եւ որպես ողբ մարմնավորվում խոր հուզականությամբ ու ներգործման ուժով գրված հետեւյալ տողերում.

*Երկիր Նաիրի, երազ հեռավոր,*
*Քնած ես քնքուշ թագուհու նըման.*
*Մի՞թե ես պիտի երգեմ քեզ օրոր*
*Եվ արքայական դնեմ գերեզման.*
*Եվ մի՞թե, մի՞թե սիրտըս ավերված*
*Ավերակներիդ լոկ պիտի պարզեմ,*
*Քո տեղ փայփայեմ ստվերըդ մեռած,*
*Քո սուրբ խոսքի տեղ իմ լացը լսեմ...*

Երկու բանաստեղծություններին բնորոշ է «մի՞թե»-ով հնչող հռետորական հարցումը, որն ավելի է խորացնում ողբից բխող հուսահատության շեշտը:

Վերստին անմնացորդ նվիրում հայրենիքին, որն այստեղ ներկայանում է ***«յոթնապատի՛կ խոցված»*** Տիրամոր կերպարանքով, ներկայանում է որպես ***«խաչված երկիր»***, բայց հարության առասպելը նորից է ոգեւորում նրան եւ վառում հույսի կանթեղները.

*Շարունակությունը՝ էջ 6*




# ԽՈՐՀՐԴԱՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԹԵՄԱ

Յուրաքանչյուր ժողովրդի քաղաքակրթության աստիճանը որոշվում եւ ամրագրվում է հատկապես նրա մշակույթի զարգացման ընթացքով եւ մակարդակով: Առանց մշակույթի անհնար է պատկերացնել որեւէ ժողովրդի տեղն ու դերը քաղաքակիրթ ազգերի ընտանիքում:

Հայությունը երկրագնդի այն ժողովուրդներից է, որի մշակույթի հնությունը չափվում է հազարամյակներով: Այդ մշակույթի խորհրդահայ շրջանի վերջին՝ «Խորհրդահայ մշակույթը 1956-1990 թթ.» պատմությունն առանձին գրքով ընթերցողին է ներկայացնում պատմական գիտությունների դոկտոր Ռուբեն Միրզախանյանը:

Աշխատությունը լույս է ընծայել ՀՀ ԳԱԱ հրատարակչությունը: Խմբագիրն է պատմագիտության դոկտոր Լավրենտի Բարսեղյանը:

Աշխատությունը բաղկացած է հինգ գլխից:

Առաջին՝ «Մշակութային կյանքի զարգացման սոցիալ-քաղաքական նախապայմանները 1956-1966 թթ.» գլխում հեղինակը վերլուծական մեթոդներով դիտարկում է այն պատմական իրավիճակն ու առանձնահատկությունները, որ ստեղծվել էին ԽՍՀՄ-ում 1956 թ. տեղի ունեցած ԽՄԿԿ 20-րդ համագումարից հետո: Այդ ֆոնի վրա տրված է վերոնշյալ իրադարձության՝ Խորհրդային Հայաստանում թողած արձագանքների ճշգրիտ պատկերը:

Նշվում է, որ ՀԿԿ կենտկոմը նույնպես փորձում է ծավալել գաղափարախոսական նոր գործունեություն, որը պետք է արտահայտեր ներքաղաքական նոր միտումները:

Սույնը վերաբերում է նաեւ մշակույթի ոլորտին:

Սակայն հին իներցիան իրեն զգացնել է տալիս, եւ միջոցառումների ամբողջ ծրագիրը կառուցված էր կուսակցության նախկին որոշումների ոգով: Մասնավորապես, պլանավորման տարածումը մշակույթի ընդհանուր բնագավառի վրա անտրամաբանական էր, որը, անշուշտ, ենթադրում էր պարտադրանքներ, որոնց արդյունքում էլ կաշկանդվում էր ազատ, ստեղծագործող միտքը:

Աշխատության հեղինակը կոնկրետ փաստերով անդրադառնում է հանրապետության մշակութային կյանքի տարբեր ոլորտներին՝ այդ թվում՝ գիտության եւ կրթության զարգացման առանձնահատկություններին: Այս առումով հետաքրքիր դիտարկումներ են կատարված, որով կոնկրետացվում է գիտակրթական ոլորտի զարգացման դինամիկան:

Ըստ վերոնշյալի՝ 1960 թ. Հայաստանում կար 66 գիտահետազոտական հիմնարկ, որտեղ աշխատում էր ավելի քան 3 հազար գիտաշխատող, այդ թվում՝ գիտությունների 153 դոկտոր եւ 1350 թեկնածու: Ներկայացված է հանրապետությունում գործող հանրակրթական դպրոցների, ուսումնարանների, տեխնիկումների ու բուհերի քանակը: Ըստ այդմ՝ 1965-1966 ուստարում Խորհրդային Հայաստանում գործել են 1574 հանրակրթական դպրոց (1950-1951 ուստարում՝ 1405 դպրոց), 36 ուսումնարան, 45 տեխնիկում եւ 11 բուհ: Տեղին ու ճշմարտացի է հեղինակի այն եզրահանգումը, որ անկախ կրթօջախներում իրականացվող կոմունիստական գաղափարական պարտադրանքից, ժողովրդական կրթության ասպարեզում ձեռք բերված նվաճումներն ակնառու էին:

Նույնը վերաբերում է գիտության ոլորտին:

Աշխատության հետաքրքիր բաժիններից մեկը վերաբերում է խորհրդահայ գեղարվեստական գրականության ու թատերգության զարգացման ուղիների պատմաքննական վերլուծությանը, որում բավականաչափ ուսանելի դիտարկումներ ու եզրահանգումներ են արված: Բազմաթիվ փաստերի եւ օրինակների վկայակոչումով աներկբա է դառնում այն ճշմարտությունը, որ Խորհրդային Հայաստանում այդ ժամանակաշրջանում գրականության եւ արվեստի նկատմամբ մեծապես զգացվում էր պետական հովանավորչությունը:

Բացի պետական հովանավորությունից, նկատելի էր նաեւ ազգային մոտեցման դրսեւորումը: Բերված օրինակներից առավել ցայտունը վերաբերում է տաղանդաշատ բանաստեղծ Պ. Սեւակին, որն արժանացավ հանրապետության գրական բարձրագույն պարգեւին՝ պետական մրցանակի՝ 1967 թվականին, երբ ԽՍՀՄ-ում լայնորեն նշվում էր Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակը, եւ բոլոր կարգի մրցանակները, որպես կանոն, տրվում էին այդ թեմայով ստեղծագործություններին:

Իրավացի է ուսումնասիրության հեղինակը, երբ նշում է, որ Հայաստանում, փաստորեն, մոտեցումն այլ էր:

Հիմնավորված է այն պնդումը, որ սույն շրջանում խորհրդահայ պոեզիային բնորոշ էր դառնում քարացած եւ կաղապարված մոտեցումներից, սխոլաստիկ մտածողությունից ազատվելու ձգտումը: Հայ ժողովրդի պատմական անցյալի, նրա հերոսական ու ողբերգական էջերը շարունակ հանդիսանում էին բազմաթիվ ստեղծագործողների բանաստեղծական աշխարհի հիմնական առանցքը:

«Արվեստը Խորհրդային Հայաստանում» ենթագլխում հեղինակը մանրամասն անդրադառնում է նույն ժամանակահատվածում խորհրդահայ թատրոնի եւ կինոյի, երաժշտական արվեստի, կերպարվեստի ու ճարտարապետության զարգացման հիմնական ուղղություններին: Հետաքրքրական են այն փաստերը, որոնք վերաբերում են հայոց Մեծ եղեռնի 50-րդ տարելիցի կապակցությամբ ծրագրված հուշահամալիրի կառուցման նախագծերի ընտրությանը: Պարզվում է, որ այստեղ մեծ դեր է խաղացել ՀԽՍՀ մինիստրների խորհրդի նախագահ Անտոն Քոչինյանի կարծիքը:

*Շարունակությունը՝ էջ 8*

# Ա. ՂԱԶԻՆՅԱՆԻ ԵՎ Պ. ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ



*Արշալույս Ղազինյան*

1990 թ. նոյեմբերի 30-ին ԳԱԱ Գրականության ինստիտուտի դահլիճում Արշալույս Ղազինյանի դոկտորական ատենախոսության պաշտպանությունն էր: Ցրտից նստել էինք վերարկուով ու գլխարկով: Չկար էլեկտրական հոսանք, ո՞ւր մնաց, թե ջեռուցում լիներ: Արցախում Շուշիի բարձունքից Ադրբեջանի վարձկանները օր ու գիշեր հրթիռակոծում էին ցածում ծվարած Ստեփանակերտը: Իսկ այստեղ սառցակալած պատուհաններից դրսի լույսը գրեթե չէր թափանցում: Եվ Արշալույսը մոմերի լույսի տակ կարդում էր իր ամփոփիչ խոսքը Գրիգոր Նարեկացու բանաստեղծական արվեստի մասին: Երեւի այդպես էլ ինքը՝ Նարեկացին էր հազար տարի առաջ Նարեկա վանքի խցում մոմի լույսով գրել իր անմահ «Մատյան ողբերգության»-ը: Բայց, ի հեճուկս դահլիճում տիրող կիսախավարի, այդ օրը բեմից Արշալույսի ամենից շատ արտասանած բառն էր «լույսը»:

Քսան տարի շարունակ Արշալույս Ղազինյանը եւ Պողոս Խաչատրյանը համատեղ, Մաշտոցի Մատենադարանում, Երուսաղեմում, Վենետիկում, Վատիկանում պահվող 61 ձեռագրեր խմբավորելով ու մանրակրկիտ համեմատելով, կազմեցին Գր. Նարեկացու Մատյանի քննական բնագիրը՝ ձեռագրական շուրջ 5000 տարընթերցվածներով, հարյուրավոր մեկնաբանումներով եւ սուրբգրային վկայություններով: Հաճախ էին վիճել տարընթերցումների շուրջ, ժամեր ու գիշերներ անցկացրել նարեկացիական հազվագյուտ բառերի ու նորաբանությունների իմաստը կռահելու վրա: Այդպես ապրել էին ավելի քան քսան տարի՝ հաճախ նաեւ ընտանեկան հոգսերին ու կյանքի բերկրանքներին անհաղորդ:

Մ. Աբեղյանը, որ Ս. Հարությունյանի աշխատակցությամբ կազմել էր Մովսես Խորենացու «Պատմություն Հայոց»-ի քննական բնագիրը, առաջաբանում նշում է, թե այս քննական հրատարակության արժեքն էջատակի ծանոթագրությունների մեջ է: Նույնը կարելի է ասել Նարեկացու Մատյանի քննական բնագրի մասին: Ինչպիսի՜ խնամքով են Արշալույսն ու Պողոսը յուրաքանչյուր էջի ծանոթագրության մեջ վերծանել ու վերականգնել ձեռագրերում եղած անընթեռնելի բառը կամ կապակցությունը: Ինչպիսի՜ երկյուղածությամբ են լրացրել որեւէ ձեռագրում եղած բացթողումը:

Դոկտորական ատենախոսության թեման հաջորդ տարիներին վերաճեց ծանրակշիռ մենագրության, որը 1995 թ. լույս տեսավ Անթիլիասում (Լիբանան)՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս երջանկահիշատակ Գարեգին Բ-ի՝ ապագա Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ի հովանու ներքո: Իրեն հատուկ համեստությամբ Ա. Ղազինյանը «Գրիգոր Նարեկացի՝ բանաստեղծական արվեստը» գիրքը համարում է ընդամենը մի քայլ՝ «Նարեկացու ստեղծագործության էությանը մոտենալու, նրա խորքերի ու գաղտնիքների մեջ թափանցելու եւ լուսաբանելու ճանապարհին»: Եվ գիրքն ավարտում է միջնադարի հայ մեծագույն բանաստեղծի իմաստուն խոսքով. ***«Միշտ ուսանիմ եւ երբեք ի գիտութիւն ճշմարտութեան ոչ հասանեմ»:***

Իսկ Պողոս Խաչատրյանի «Նարեկի միջնադարյան լուծմունքը» (Երեւան, 1990) եւ «Գր. Նարեկացին եւ հայ միջնադարը» (գիրք Ա, Էջմիածին, 1996) գրքերը մեծն Նարեկացուն ըստ էության մեկնաբանելու եւ արժեւորելու փայլուն վկայություններ են:

1996-ի նոյեմբերի 1-ին, երբ ես եւս պաշտպանում էի դոկտորական ատենախոսություն՝ «5-րդ դարի հայ մատենագրության ժամանակագրական խնդիրներ» թեմայով, երեք ընդդիմախոսներից մեկը՝ դոկտոր Գեւորգ Աբգարյանը, ծանր հիվանդ էր եւ խնդրեց, որ իր խոսքը կարդա միայն Արշալույս Ղազինյանը: Եվ քանի որ ամբողջ պաշտպանության ընթացքը ձայնագրվում էր ժապավենի վրա, ուստի իմ ձայնադարանում պաշտոնական ընդդիմախոսներ ԳԱԱ փոխնախագահ Գագիկ Սարգսյանի եւ դոկտոր Պողոս Խաչատրյանի ձայների հետ միասին Գեւորգ Աբգարյանի արժեքավոր կարծիքը մնացել է իմ գործընկեր Արշալույս Ղազինյանի ձայնով, որ առնվազն երկու խորհուրդ ունի՝ որքա՜ն բարձր էր գնահատում դոկտոր Աբգարյանն Արշալույս Ղազինյան գիտնականին եւ հայ հին մատենագրության քաջահմուտ գիտակին, եւ ապա՝ Արշալույսն իր խոսքի ամեն մի շեշտադրման մեջ արտահայտել է եւ իր անձնական գնահատանքը պաշտպանության ներկայացված գործի նկատմամբ, որի մեջ քննարկվում էին բազմաթիվ վիճահարույց հարցեր: Ինքը՝ Արշալույսը, պաշտպանությունից հետո իր ցանկությամբ առանձին կարծիք ներկայացրեց Բարձրագույն որակավորման հանձնաժողովին՝ պաշտպանելով իմ ատենախոսության մեջ առաջ քաշված լուծումները, որոնք մինչ այդ շատ թերեւդեմ կածիքների տեղիք էին տվել:

2003-ին, երբ նշվում էր Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» քերթվածի գրության հազարամյակը, այդ բանաստեղծական գլուխգործոցի քննական բնագրի երկու վաստակավորներ Արշալույս Ղազինյանը եւ Պողոս Խաչատրյանը, ցավոք, անսպասելի հեռացել էին կյանքից: Շատերը մասնակցեցին Երեւանում, Փարիզում եւ այլուր տեղի ունեցած հոբելյաններին, բայց ամենաերախտավոր նվիրյալները բացակա էին: Զարմանալի է արվեստագետ-գիտնականի ճակատագիրը...

2003-ի սեպտեմբերի վերջին Ծաղկաձորում կազմակերպվեց հոբելյանական նստաշրջան՝ նվիրված Նարեկացու Մատյանի հազարամյակին: Ներկա էին շատ մասնակիցներ նաեւ արտերկրից: Իմ ելույթի թեման էր Գրիգոր Նարեկացու «Հարության տաղ»-ի նոր մեկնությունը: Սեպտեմբերի 25-ին, հանդես գալով եզրափակիչ նիստում, ես խոստացա զեկուցումս շուտով հրապարակել գիտական մամուլում եւ դրա փոխարեն խնդրեցի թույլ տալ կարդալ իմ բանաստեղծությունը՝ նվիրված իմ գործընկերներ Արշալույս Ղազինյանին եւ Պողոս Խաչատրյանին, որպեսզի նրանք նույնպես ներկա լինեն Նարեկացու Մատյանի հազարամյա հոբելյանին.



*Պողոս Խաչատրյան*

*Անհուն տքնող ոգու համար*
*Կա վեհ մի պահ աստեղային,*
*Եվ այն խցում կիսախավար*
*Կարծես վերից լույս տեղային:*

*Կարծես խուց չէր, այլ սուրբ տաճար,*
*Ուր ոգեշունչ Նարեկացին*
*Ոգում էր իր տողերն անճառ՝*
*Աչքը հառած նոր քերթվածին:*

*Նրա առջեւ՝ փուտ սեղանին,*
*Մատյանն էր այն՝ լույսի Կտակ,*
*Որ հայն, ինչպես սպեղանին,*
*Պիտի պահեր իր գլխի տակ:*

*Հայը արդեն հազար տարի*
*Չի՜ բաժանվում իր Նարեկից՝*
*Այն, որ հայի թե օտարի*
*Ցավին, վշտին էր կարեկից:*

*Նա հիվանդից չարը վանող,*
*Ու չար աչքի փուշը հանող,*
*Լույս էր տալիս նա կույր աչքին,*
*Հալածիչ էր դեւ ու քաջքին:*

*Իբրեւ բժիշկ ապաքինող՝*
*Վանում էր ախտն ապականող.*
*Տկար հոգուն նա ամոքիչ,*
*Երբ չարն էր շատ, ու գութը՝ քիչ:*

*Արդեն եղավ ճիշտ տասը դար՝*
*Խցում, հյուղում թե քարայրում*
*Գրիչները հմուտ, ճարտար*
*Նարեկներ են արտագրում:*

*Շարունակությունը՝ էջ 7*

# ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ-125
## (1885-1920)

*Սկիզբը՝ էջ 5*

***Ինչպե՞ս չըսիրեմ, երկիր իմ կիզված,***
***Պարզված վերըստին սրերին սուրսայր.***
***Ինչպե՞ս չըսիրեմ - հեզությամբ լցված***
***Դու յոթնապատի՛կ խոցված Տիրամայր:***

***Որքան որ եկան՝ արյունից ագահ,***
***Դու կամավոր զոհ - բոլորը տվիր.***
***Դու հավետ եղար անարատ վըկա -***
***Չարերի կոխան, խաչված իմ երկիր:***

***Հրկեզ քո հոգին, որպես առատ խունկ,***
***Աշխարհի համար պարզեցիր անպարտ,***
***Հեզ ընդունեցիր երդում ու երկունք,***
***Դու արքայաբար վեհ ու անարատ:***

***Ժամ է, ե՛լ նորից, իմ ծիրանավառ,***
***Զրահավորի՛ր խանդով խնդագին,***
***Վառի՛ր երկունքի գիշերում խավար***
***Հրով մկրտված նաիրյան հոգին...***

Տերյանը նաեւ ներբող է գրում Արարատին՝ որպես իր ժողովրդի հավերժության խորհրդանշան: Ասես Արարատը նյութեղեն չէ, այլ ոգի, որ կանգնած է որպես ***«Արդար դրոշ հայության»***:

***Կանգնի՛ր, անկյալ ժողովուրդ,***
***Եվ հավատա՛, եւ տոկա՛.***
***Կա քո վշտում վեհ խորհուրդ,***
***Եվ Խաչվածին մահ չըկա:***
***Պարզվի՛ր պայծառ դեպի վեր,***
***Ցոլա՛ հըրով անարատ,***
***Երկրիս մոխիր ու ավեր***
***Դու անմահ սիրտ, Արարա՛տ...***

«Երկիր Նաիրի» շարքի անբաժան մասն է «Մի՛ խառնեք մեզ ձեր վայրի արջի ցեղերին...» բանաստեղծությունը, որի մեջ Տերյանը բարձրացնում է իր տրորված, հոշոտված երկրի բարձր արժանապատվությունը՝ դրանով իսկ բարձրացնելով ընդանրապես հայ մարդու ազգային արժանապատվությունը.

***Մի՛ խառնեք մեզ ձեր վայրի, արջի***
***ցեղերին,-***
***Մեր երկիրը ավերված, բայց սուրբ է***
***եւ հին:***

***Որպես լեռն է մեր պայծառ տեսել***
***հազար ձյուն,***
***Այնպես նոր չեն մեզ համար դավ ու***
***դառնություն:***

***Բաբելոնն է եղել մեր թշնամին - ահա՛***



***Դաշտ է տեղը, եւ չըկա քար քարի վրա...***
***Բարբարոսներ շատ կըգան ու կանցնեն***
***անհետ,***
***Արքայական խոսքը մեր կըմնա հավետ:***

***Չի հասկանա ձեր հոգին եւ ծույլ, եւ***
***օտար,***
***Տաճար է մեր երկիրը՝ սուրբ է ամեն քար:***

***Եգիպտական բուրգերը փոշի կըդառնան,***
***Արեւի պես, երկի՛ր իմ, կըվառվես***
***վառման:***

***Որպես Փյունիկ կրակից կելնես,***
***կելնես նոր***
***Գեղեցկությամբ ու փառքով վառ ու***
***լուսավոր:***

***Արիացի՛ր, սի՛րտ իմ, ե՛լ հավատով***
***տոկուն,***
***Կանգնի՛ր հպարտ՝ որպես լույս լեռն***
***է մեր կանգուն:***

Իր երկրի ուժը ու զորությունը, դիմացկունությունն ու հարակայությունը հավաստելու համար Տերյանը դիմում է պատմական անդրադարձի, հիշում հզորագույն պետություններ, որոնք վաղուց չկան, բայց Երկիր Նաիրին կա ու պիտի լինի:

Տերյանը հավատում էր Հայաստանի հարությանը եւ դրա համար էլ օգտագործել է եգիպտական բուրգերի եւ Փյունիկի խորհրդանշանները. բուրգերն անգամ փոշի կդառնան, իսկ Փյունիկը կհառնի: Իսկ նրա հույսերի բարձրագույն խորհրդանշանը Արարատ լեռն է, որը հավատ եւ հպարտություն է ներշնչում:

«Երկիր Նաիրի» շարքի մեջ միավորվում են երկրի բախտն ու բանաստեղծի ճակատագիրը:

*Շարունակելի*

***Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ***
***Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր***

# «ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ» ԶՐՈՒՑԱՇԱՐ

## ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ

### Մեր հյուրն է Բյուրավանի Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգեւոր հովիվ Ղազար քհն. ՊԵՏՐՈՍՅԱՆԸ

ԿԻՑ անկյունում

**- Տե՛ր հայր, զրուցաշարի ընթացքում Դուք տարբեր առիթներով օգտագործեցիք «տիեզերական ընտանիք» արտահայտությունը: Փորձենք պարզել՝ ի՞նչ ասել է տիեզերական ընտանիք:**

- «Տիեզերական» եզրն ինքնին ենթադրում է, որ ամբողջ տիեզերքն է մասնակցում տվյալ ընտանիքի կայացմանը, իսկ ավելի պարզ՝ բոլոր նրանք, ովքեր արժանանում են տիեզերքի Արարչի ողորմությանը, շնորհին ու փրկագործությանը: Տիեզերական ընտանիքը Քրիստոսով ու Նրա Եկեղեցիով, նույնն է թե՝ Ճշմարտությամբ ու Արդարությամբ միավորված, մեկ դարձած մարդկային հավաքականությունն է: Այս միտքը քանիցս շեշտվել է թե՛ Հին եւ թե՛ Նոր ուխտի գրքերում: «Երգ երգոցը» դրա վառ արտահայտություններից մեկն է՝ Քրիստոս-Փեսայի եւ Եկեղեցի-հարսի սրբազան միությունը: Նույնը նկատի ուներ Հովհաննես Մկրտիչը, ով Փեսային իրեն բարեկամ ունենալու կատարյալ ուրախությամբ վկայեց. «Ով հարս ունի, նա՛ է փեսան... Պետք է, որ Նա մեծանա, իսկ ես՝ նվազեմ» (Հովհ. Գ 29-30): Այդպես էլ եղավ. Քրիստոսի խաչելությամբ եւ հրաշափառ հարությամբ բացվեց նոր ժամանակաշրջան, բացվեց երկնային թագավորության դուռը, եւ խաչն էր այդ բանալին, որով բացվեց: Եվ Քրիստոս-Փեսային սրբազան միությամբ միավորելու ընդառաջ ելավ Համաշխարհային Եկեղեցին՝ Աստվածորդու արյամբ փրկագնված Եկեղեցին, եւ հենց այս միությունն էր, որ դարձավ տիեզերական ընտանիք: Ուրեմն յուրաքանչյուր մկրտություն մի տեսակ լրումն է այս ընտանիքի, եւ հարկ է, որ յուրաքանչյուր չափահաս մկրտվող խորապես գիտակցի՝ ինչպիսի մեծ շնորհ ստացավ, միաժամանակ ինչպիսի պատասխանատվություն ստանձնեց՝ դառնալով տիեզերական ընտանիքի անդամ, այսինքն՝ քրիստոնյա:

**- Հետեւաբար նրանք, ովքեր դեռ մկրտված չեն, զրկվա՞ծ են տիեզերական ընտանիքի անդամակցությունից:**

- Բնականաբա՛ր: Որովհետեւ մկրտությունը, որ վերստին ծննդյան խորհուրդն է, հաստատեց Ինքն անձամբ՝ մեր Տեր Հիսուս



Քրիստոսը: Եվ այն անձինք, ովքեր վերստին չեն ծնվել մկրտությամբ, այսինքն՝ հոգեւոր ծնունդով, ուրեմն ծնված չեն Աստծու առջեւ, հետեւաբար չեն կարող մտնել երկնքի թագավորություն, ինչպես որ Հիսուսն ասաց Նիկոդեմոսին. «Որովհետեւ մարմնից ծնվածը մարմին է, իսկ Հոգուց ծնվածը՝ հոգի» (Հովհ. Գ 6): Իսկ հոգեւոր ծնունդը միայն մկրտությամբ կարող է լինել՝ «ջրից ու Հոգուց», որով Եկեղեցին մարդուն արժանացնում է փրկության բուն առանցքին՝ Տիրոջ խաչին, թաղմանը եւ հրաշափառ հարությանը: Եվ վերստին ծնված մարդու մեջ, դրոշմի սրբազան խորհրդով, Աստծու Սուրբ Հոգին է հանգչում, եւ օծության սուրբ յուղով կնքված մարդն այդուհետ դառնում է Քրիստոսի տիեզերական Եկեղեցու անդամ, այսինքն՝ լիարժեք քրիստոնյա: Մեզ՝ հայերիս համար այս ամենն ընկալելն ու հասկանալը շատ հեշտ է, որովհետեւ մենք ունեցել ենք հավատավոր ու բարեպաշտ նախնիներ, ովքեր չեն էլ պատկերացրել առանց կնունքի հայ մարդու. «մարմնից ծնված» երեխային քառասունքի մեջ արդեն արժանացրել են հոգեւոր ծննդյան:

**- Դրախտի ընտանիքը նույնպե՞ս ինչ-որ առումով տիեզերական ընտանիք էր: Նկատի ունեմ մեր նախածնողներին:**

- Ինչ-որ առումով՝ այո՛: Բայց կան նաեւ լուրջ տարբերություններ: Դրանցից ամենաէականն այն է, որ Ադամի եւ Եվայի ընտանիքը, ըստ էության, քայքայվեց. մեր նախածնողները մեղանչելով դարձան մահկանացու եւ ծնունդ տվեցին մահկանացու սերունդների, իրենք տառապանք վաստակեցին, ինչը փոխանցեցին բոլոր սերունդներին: Մինչդեռ Քրիստոսի տիեզերական ընտանիքն այլեւս քայքայման ենթակա չէ, քանզի գնված է Աստծու Որդու զոհագործությամբ եւ սրբազան արյամբ: Եվ եթե անգամ սատանան կարողանա Մարտնչող Եկեղեցու որոշ անդամների խաբեությամբ խլել, ի՞նչ կարող է անել Հաղթանակած Եկեղեցուն, որը վաղուց է արժանացել աստվածային սրբազան զորության եւ սպասում է Ահեղ Դատաստանին ու վերջնական հատուցմանը...

**- Ասացինք, որ յուրաքանչյուր մարդ, մկրտվելով ու վերստին ծնվելով եկեղեցու սուրբ ավազանից, դառնում է տիեզերական ընտանիքի անդամ: Մարդը, սակայն, իր կյանքի ընթացքում անընդհատ սայթաքում է՝ կամա թե ակամա մեղքեր գործելով. ուրեմն զրկվո՞ւմ է այդ ընտանիքի անդամությունից:**

- Մկրտության արարողության մեջ շատ հետաքրքիր աղոթք կա. դա ծեսի վերջին աղոթքն է, որով քահանան խնդրում է Բարձրյալին, որ այս նոր մկրտվածի, Սուրբ Հոգու շնորհներն ստացածի եւ Աստծուն որդեգրվածի անունը երբեւէ չջնջվի կենաց գրքից: Ուրեմն հնարավոր է, որ ջնջվի: Ո՞ր դեպքում: Մկրտվելով սուրբ ավազանից՝ մարդը, անշուշտ, հրեշտակ չդարձավ. մարդ էր, մարդ էլ մնաց: Ստացա՞վ Աստծու Սուրբ Հոգին, գրանցվե՞ց կենաց գրքում... Բայց սա միայն սկիզբն է. թող ոչ ոք ինքն իրեն չխաբի, թե մկրտությամբ ամեն բան ավարտվեց, եւ ինքն արդեն փրկված է: Ո՛չ եւ ո՛չ: Աղանդավորության, անհավատության, պիղծ կյանքի, մեղքերի շատության, անզեղջ կյանքի եւ հաղորդությունից հեռու մնալու պատճառով մարդու անունը կարող է ջնջվել երկնային կյանքի գրքից: Հաղորդությունից զուրկ մարդու հոգին պիտի սովամահ լինի, չապաշխարող մարդը գազանի պիտի նմանվի... Երկու պարտադիր խորհուրդ կա, որ յուրաքանչյուր քրիստոնյա պարտավոր է իր ողջ կյանքի ընթացքում կիրառել՝ ապաշխարություն եւ հաղորդություն: Ապաշխարությամբ մկրտությունից հետո գործած բոլոր հանցանքների համար թողության պիտի արժանանա Աստծուց, իսկ հաղորդությամբ էլ անընդհատ պիտի վերականգնվի իր սրբազան ուխտի մեջ, ամրանա ու զորանա:

**- Տե՛ր հայր, «տիեզերական ընտանիք» եզրն ինքնին ենթադրում է դավանում տիեզերական արժեքների, համամարդկային, աստվածային արժեքների՝ սիրել, ներել, գթալ... Միաժամանակ, ամենափոքր տարիքից սկսած, երեխային հասու դարձնել, հաղորդակցել ե՛ւ ազգային, ե՛ւ համամարդկային հոգեւոր արժեքներին: Կարծում եմ՝ մեր հասարակությունը, գոնե այսօր, շատ հեռու է այդ երանական վիճակից: Այդ ի՞նչ հրաշքով, եւ արդյո՞ք հնարավոր է մարդկանց գիտակցության եւ սրտերի մեջ աստվածայինի, այդ հոգեւորի սկիզբը դնել: Եվ ո՞վ կարող է ու պետք է դա անի:**

- Եկեղեցին հոգեւոր առումով բաղկացած է մարդկանցից՝ հավատացյալ մարդկանցից: Ուստի Ձեր հիշատակած երանական այդ վիճակը, այդ «մթնոլորտը» մարդիկ պետք է անձնապես կրեն իրենց հոգում:

Շարունակությունը՝ էջ 8

# Ա. ՂԱՉԻՆՅԱՆԻ ԵՎ Պ. ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Սկիզբը՝ էջ 6

*Արտագրում, ծաղկում են պերճ,
Ու տարածում երկրում անվերջ.
Ինչքան ողբն էր ավելանում,
Այնքան Նարեկն էր բազմանում:*

***

*Երկու ներհուն նվիրյալներ
Ոսկեդարյան գրաբարի,
Որ ունեին վեհ իդեալներ
Եվ պաշտամունք գաղափարի.
Կարող էին մեկնել անգամ
Դավիթ Անհաղթ, Կանտ ու Հեգել,
Բայց միտք դրին հոժարակամ
Նարեկը սուրբ տառ-տառ հեգել:*

*Նվիրեցին այս Մատյանին
Ամեն մեկը քսան տարի-
Ի՜նչ տարիներ ու ի՜նչ տարիք
Կյանքի, սիրո, նվիրումի:
Ու զրկեցին իրենց տարով
Զվարճանքից հազար ու մի:*

*Գիտեն հոգով բանասերի
Հայոց բառուբանը սիրել,
Ու տքնությամբ անասելի
Գիտեն քննել, բանասիրել,
Որ դասական գրաբարով
Ասում էին «սիրաբանել».
Կարող էին - մարդ ես, էլի,
Հենց իսկապես սիրաբանել,-*

*Կյանքում դեռ կան, իրավ, բաներ,
Որ լոկ մտքով չես հասկանա,
Չէ՞, լոկ մտքով ու կամ խելքով
Չե՛ս հասկանա խենթացողին.
Չե՛ս իմանա,
Թե ինչ մուտքով ու կամ ելքով
Քեզ կտանի,
Ո՞ւր կհանի
Կյանքի անհայտ ընթացուղին:*

*Այսպես ահա ողջ կյանքը մեր
Գժվելու չափ պարզ է ու բարդ,
Եվ չգիտես ինչի՞ց է մարդ
Նվաստանում, հերոսանում.
Ո՞նց է ծառը դալարազարդ
Պտղաբերում կամ գոսանում.
Երկուսն էլ դեռ երիտասարդ՝
Արշալույս ու Պողոս անուն,
Երկու ներհուն նվիրյալներ
Գրաբարի, գաղափարի.
Վաթսուն անգամ բաղդատեցին
Մտասեւեռ տառը տառի...
Խոնարհվեցին սուրբ Նարեկին
Ցայգ ու ցերեկ, քսան տարի
Թափանցեցին գաղտ, անմեկին
Ծածուկները ամեն տարրի:
Ոչ թե կարդում, այլ հեգելով
Փնտրում էին բառերը եղծ,
Հաճախ իրար իսկ հերքելով՝
Բացահայտում իմաստը կեղծ:*



*Նարեկացու համար վիճում,
Նրա համար իրար զիջում,
Քաղհանեցին ածու-ածու
Քերթվածը ճոխ Նարեկացու:*

*Տաղ մեկնեցին, կշռույթ ու վանկ.
Ամեն տոնի՝ լոկ մտովի,
Ուխտ գնացին Նարեկավանք՝
Մոտիկ բլրին Վանա ծովի:*

*Այնտեղ Նարեկ վանքն է ավեր,
Կողքին՝ մզկիթն անկարեկից.
Այս Ողբը մեծ, լա՜ճ տնավեր,
Մեզ լոկ մնաց շեն Նարեկից:*

*Ողբը այստեղ, վանքը այնտեղ-
Քիչ է մնում ոռնաս ցավից-
Նզո՛վք չարին այն արնահեղ,
Որ մեզ զրկեց Վանա ծովից...
Վաթսուն անգամ բաղդատեցին
բառը բառի
Ու սրբեցին դարեր նստած փառը բառի.
Նղնղեցին ցորյանի պես հատիկ-հատիկ
Բառեր, բառեր բազմախորհուրդ,
բազմապատիկ,
Վերծանեցին մտքեր եղծված,
մտքեր հերձված՝
Աղոտ մոմի աղոտ լույսով
թյուրընթերցված:*

*Գիր հեգելով՝ գիրկապ արին,
Ինչպես խոնարհ զույգ աշակերտ,
Ու նոր փայլով փայլեցրին
Մատյանը այս հրաշակերտ:*

*Մատյա՛ն չէ սա Ողբերգության,
Այլ հատուցման ու ցասումի,
Աշխարհացունց Նոր հայտնության՝
Դատաստանի, բացասումի:*

*Պիտի լինի աշխարհանցում
Ու կբացվեն հուսո դռներ.
Լինի ատյան ու հատուցում,
Տուն գան սրբեր, վանքեր, լեռներ:*

*Արդարությո՛ւն է լինելու,
Բայց ոչ անբան հորանջողի,
Հարմարվողի համար հլու,
Այլ անձնուրաց մարտնչողի:*

*Կճառագի լույս անպատում
Նոր աշխարհի լուսաբացին,-
Այսպե՛ս է իր լույսն ավետում
Քերթողամեծ Նարեկացին:*

*Ալբերտ ՄՈՒՇԵՂՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր*

# «ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ» ԶՐՈՒՅՑԸ

Սկիզբը՝ էջ 7



Հավատացե՛ք՝ մարդկության պատմության ընթացքում միշտ էլ այդպես է եղել. մարդկային հոգեւոր առաջընթացը միշտ էլ հենված է եղել անհատների վրա: Այսինչ թագավորը կամ այսինչ կաթողիկոսը այս բանն արեց... եւ պատմությունը կերտվեց: Նույնը՝ հակադիր առումով. այսինչ ուրացողը, դավաճանը այսպես արեց, եւ...

Գիտեք՝ երանական վիճակի հասնելու համար հավատքի, սրբության աճ է պետք: Այսօր հավատքի զորացմա՛ն կարիքը կա: Եվ սրա համար էլ զորեղ անհատներ են պետք. մեկ ճշմարիտ աղոթական անձը, զորավոր հավատքի տեր մեկը մի ամբողջ աղոթական միջավայր կարող է ստեղծել իր շուրջը: Ժամանակին Մեծ անապատ ենք ունեցել, վանական միաբաններ: Ինչպե՞ս է ձեւավորվել: Միայն մի օրինակ հիշեմ: Մի Սարգիս սրբազան, մի տեր Կիրակոս Երուսաղեմում, Աստծու Սուրբ Հոգով լցված, իրենց կյանքն Աստծուն նվիրաբերած, ճգնում եւ պաշտում էին Աստծուն: Հետո հայտնվեց երրորդը՝ Մովսես Տաթեւացին, որն այս երկուսին բերեց Հայաստան, նրանց համար որոշ պայմաններ ստեղծեց, ինչի արդյունքում մի իսկա վանական, աղոթական եղբայրություն ձեւավորվեց: Ուրեմն հասարակության հոգեւոր, բարոյական առողջությունը շատ հաճախ ուղղակիորեն պայմանավորված է նմանատիպ օջախների, առավել եւս՝ անհատների գոյությամբ:

Վերջերս, երբ մեր գյուղական համայնքի անդամներով ուխտի էինք գնացել Տաթեւի վանք, տեսանք, թե ինչպես այնտեղ հայր Միքայելը, Սամվել սարկավագը, մյուսները ամեն օր 5-6 ժամ աղոթք են անում: Լսելով այդ անձանձրույթ ու հոգալից աղոթքները՝ մենք մեզ հանդիմանեցինք. ինչքա՜ն նանրամիտ, թույլ, տկար մարդիկ ենք, որ օրական գոնե քսան րոպեանոց երեք ժամերգություն չենք կարողանում ամբողջությամբ կատարել, այդպիսի աղոթական հոգի ունենալ եւ դրանով իսկ զորանալ հավատքի կյանքի մեջ:

Եվ հասկացանք՝ ճիշտ այսպիսի կրթություն ու դաստիարակություն են տվել մեր վանքերն ու վանականները քաղաքային ու գյուղական համայնքներին, որոնց մեջ բավականին դրական փոփոխություններ են նկատվել, ինչի արդյունքում առողջացել է նաեւ հասարակությունն ամբողջությամբ:

**- Տե՛ր հայր, եզափակենք զրուցաշարը: Ընդունված է ասել, որ առողջ հասարակության հիմքն ամուր ընտանիքներն են: Ի՞նչ ասել է ամուր ընտանիք:**

- Քրիստոնեությունը միակնության բարիքը հաստատեց աշխարհում, որով ամբողջացավ ու իմաստավորվեց ընտանիք հասկացությունը: Ուստի ամուր ընտանիք նշանակում է սուրբ պսակի աստվածային օրհնությամբ հաստատված ընտանիք: Ամուր ընտանիքն աստվածապաշտ ընտանիքն է, միմյանց հավատարիմ ամուսինների ընտանիքը: Ամուր ընտանիք նշանակում է ծնողների եւ զավակների ճիշտ եւ առողջ փոխհարաբերություն, այր ու կնոջ սեր ու հարգանք, նշանակում է նորամուծություններով չխաթարված ընտանիք: Մեկ խոսքով՝ ամուր ընտանիքը քրիստոնեական ընտանիքն է՝ տիեզերական մեծ ընտանիքի առողջ բջիջը եւ մանրակերտը՝ պարզ, հավատավոր, բարեպաշտ:

*Հյուրընկալեց*
*Հայկ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ*

# Քահանայական ժողով Արցախի թեմում

Հունիսի 23-ին Արցախի թեմում, ատենապետությամբ թեմակալ առաջնորդ Տ. Պարգեւ արք. Մարտիրոսյանի, տեղի ունեցավ քահանայական ընդլայնված ժողով: Ժողովին, բացի հոգեւորականաց դասի, մասնակցում էին նաեւ ԼՂՀ կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների եւ կրոնի հարցերի բաժնի պետ Աշոտ Սարգսյանը եւ թեմի Տեղեկատվական համակարգի տնօրեն Գարիկ սարկավագ Ասրյանը՝ իբրեւ ատենադպիր:

Պարգեւ սրբազանը ժողովականներին ներկայացրեց նիստում քննարկվելիք հիմնական հարցերը:

Նախ քննության առնվեցին Գանձասարի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու 770-ամյակի տոնակատարությունների ծրագրերը: Ըստ այդմ՝ հուլիսի 10-ին Ստեփանակերտում կկայանա հանդիսավոր երեկույթ, որի ընթացքում կցուցադրվի Արցախի պետական հեռուստատեսության կողմից Գանձասարի վերաբերյալ նկարահանված ֆիլմ, կհնչեն տարբեր ելույթներ: Երեկույթի վերջում կցուցադրվի նաեւ Արցախի թեմի «Գանձասար» աստվածաբանական կենտրոնի եւ «Վեմ» ռադիոկայանի տնօրեն Տ. Մեսրոպ քահանա Արամյանի հեղինակած եւ արդեն մեծ արձագանք ստացած «Արարատից Սիոն» ֆիլմը:

Հուլիսի 11-ին՝ Վարդավառի տոնին, Պարգեւ սրբազանի ձեռամբ Գանձասարում կմատուցվի Պատարագ: Շուրջ 700 ուխտավորների Գանձասար տանելու համար կտրամադրվեն մեքենաներ: Պատարագից հետո ուխտավորների համար կկատարվի մատաղօրհնեք, ԼՂՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարության կողմից կիրականացվեն մշակութային միջոցառումներ:

Տոնի առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից 2 օրով Գանձասար կբերվեն ս. Հովհաննես Մկրտչի մասունքները:

Սեպտեմբերին նախատեսվում է Արցախում կազմակերպել եռօրյա գիտաժողով, որի նյութերը կհրապարակվեն առանձին գրքով: Հրատարակության է պատրաստվում նաեւ 3 այլ գիրք:

Շուտով համացանցում կհայտնվի Գանձասարի մասին կայքէջի հայերեն տարբերակը: Տոնական միջոցառումները պարբերաբար կլուսաբանվեն ԶԼՄ-ներով, ինչպես նաեւ համացանցում՝ ֆորումների, բլոգների եւ սոցիալական ցանցերի միջոցով:

Արցախի հոգեւոր-մշակութային կյանքում մեծ կարեւորություն ներկայացնող սույն իրադարձությունը նշվում է Եկեղեցի-պետություն համատեղ բարձր մակարդակով:

Այնուհետեւ ժողովականները քննության առան Արցախի թեմում ծխական համայնքների ստեղծման հարցը: Պարգեւ սրբազանը, ընդգծելով հոգեւորականի առաջնահերթ առաքելությունը, կարեւորեց եկեղեցական համայնքային կյանքի զարգացումը, ինչն իր արդյունավետությունը կունենա նաեւ աղանդավորության դեմ պայքարում: Որոշվեց հնարավորինս կարճ ժամանակում ողջ թեմում ստեղծել ծխական խորհուրդներ եւ եկեղեցական համայնքներ:

Տիար Աշոտ Սարգսյանը, ողջունելի նկատելով նման համայնքների ստեղծումը, հավաստիացրեց, որ պետության կողմից կցուցաբերվի հնարավոր ցանկացած աջակցություն:

Քահանայից ժողովը քննարկեց նաեւ մի շարք այլ կարեւոր խնդիրներ՝ ներքին կազմակերպչական, եկեղեցաշինական, թեմի նյութական ծախսերի, հոգեւորականների զգեստների, եկեղեցական երգչախմբերի կազմավորման եւ այլնի վերաբերյալ:

*Արցախի թեմի*
*տեղեկատվական համակարգ*

# ԽՈՐՀՐԴԱՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԹԵՄԸ

Սկիզբը՝ էջ 5

Մրցույթի ներկայացված նախագծերից նա միանշանակորեն հավանություն է տալիս ճարտարապետներ Արթուր Թարխանյանի ու Աշոտ Քալաշյանի նախագծին՝ գտնելով, որ նրանում «Երկու բաղադրիչները՝ սուգն ու վերածնունդը մատուցված են ճարտարապետական պարզ ու մատչելի լեզվով: Մեկը՝ խաչքարաձեւ, խոնարհված կոթողներով, մյուսը՝ շեշտակի վերասլաց սրածայրով» (էջ 123): Հենց Ա. Քոչինյանն էլ նպաստում է ճիշտ ընտրություն կատարելուն:



Աշխատության երրորդ գլուխը նվիրված է հայրենիք-սփյուռք մշակութային կապերի սկզբնավորման եւ զարգացման ընթացքի գիտական մշակմանն ու լուսաբանմանը: Նշվում է, որ հայրենիք-սփյուռք մշակութային մերձեցմանը նպաստող գործոնները երկուսն էին՝ քաղաքական (հատկապես խրուշչովյան «ձնհալի» առկայությունը), որն աստիճանաբար, արդեն 1960-ական թթ. կեսերից, ինքն իրեն սպառեց, եւ մշակութային, որը շարունակվեց մինչեւ Խորհրդային Միության փլուզումը:

Վերոնշյալ կապերի օրեցօր ընդլայնումը ծնեց Սփյուռքի հետ աշխատանքները կոորդինացնող մարմնի ձեւավորման գաղափարը, որի հիմնադիր կոնֆերանսը տեղի ունեցավ 1964 թ. հունիսի 25-ին Երեւանում: Կազմակերպության նախաձեռնողներն էին Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինը, անվանի մտավորականներ Մարտիրոս Սարյանը, Վարդգես Համազասպյանը, Ստեփան Զորյանը, Նաիրի Զարյանը, Սիլվա Կապուտիկյանը, Հրաչյա Քոչարը եւ ուրիշներ:

Անդրանիկ նիստում Մ. Սարյանի առաջարկությամբ նորաստեղծ մարմինը վերանվանվում է «Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտե» (էջ 153):

Հատակ մատնանշվում է այն միտքը, որ Մեծ եղեռնի 50-ամյակի պետականորեն ոգեկոչումը նոր կարեւոր ազդակ էր հայրենիք-սփյուռք մերձեցման համար: Իսկ Խորհրդային Հայաստանի այդ ժամանակվա ղեկավար Յա. Զարոբյանն իր հետագա գործունեությամբ էլ ավելի նպաստեց վերոնշյալ մերձեցմանը:

Աշխատության հետաքրքիր, ուշագրավ մասերից է չորրորդ գլուխը՝ «Մշակութային կյանքը Հայաստանում 1966-1990 թթ.» խորագրով: Այս ժամանակաշրջանը, ըստ մշակույթի պատմության հետազոտողի, լի էր մշակութային կյանքի զարգացման վերընթացն ապահովող իրադարձություններով ու իրողություններով, որն առկա էր գրեթե բոլոր ոլորտներում: Լուրջ նվաճումներ էին գրանցվում ժողովրդական կրթության, գիտության, թատրոնի եւ կինոյի բնագավառներում:

Դա, անշուշտ, այդպես էր, քանզի մշակութային կյանքը Խորհրդային Հայաստանում պետական հովանավորության առարկա էր: Վիթխարի աշխատանք էր իրականացվում նաեւ երկրի գյուղական շրջաններում:

Այս առումով հեղինակի եւս մեկ իրավացի եզրահանգումը հետեւյալն է. «Ժողովրդական կրթության զարգացումը համարվում էր համապետական գործ, եւ երբեք հայ գյուղը այնքան հարուստ չէր եղել կրթական հիմնարկներով, մշակութային օջախներով, ակումբներով, գրադարաններով, կուլտուրայի տներով»:

Սույն աշխատության էջերում սա տեսանելի է նաեւ կոնկրետ թվերով ու փաստերով, համապատասխան աղյուսակներով: Հպարտանալու շատ բան կար այդ ժամանակներում, եւ այդ ոգով ու ոճով էր ներծծված Հայաստանի թիվ 1 ղեկավարի՝ Կ. Դեմիրճյանի 1981 թվականին ՀԿԿ կենտրոնական կոմիտեի եւ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի հանդիսավոր նիստում ունեցած հաշվետու ելույթը. «Մեր մեծ նվաճումն է այն, որ այժմ հանրապետությունը ծածկված է թատրոնների, համերգասրահների, կինոթատրոնների, գրադարանների, թանգարանների, երաժշտական, գեղարվեստական, պարարվեստի դպրոցների եւ ուսումնարանների խիտ ցանցով»:

Սակայն, այնուամենայնիվ, վերոնշյալ նվաճումներին զուգահեռ, հասարակության խորքերում հասունանում էին լուրջ ճգնաժամային երեւույթներ, որոնց սկզբնական շրջանում տրվեց «լճացում» անվանումը:

Լճացում, որը շատ արագ վերածվեց համակարգային ճգնաժամի: Սույն հարցերին հեղինակն անդրադառնում է «Խորհրդահայ մշակույթը հասարակական-քաղաքական նոր պայմաններում՝ 1985-1990 թթ.» ենթաբաժնում:

Ամփոփելով նշենք, որ Ռ. Միրզախանյանի գրախոսվող սույն աշխատությունը եւս մի կարեւոր ներդրում է հայ պատմագիտության մեջ առհասարակ եւ Հայաստանում մշակութային կյանքի ուսումնասիրության ասպարեզում մասնավորապես:

Աշխատությունն ունի ռուսերեն եւ անգլերեն լեզուներով ամփոփումներ, ինչպես նաեւ զետեղված են վերոնշյալ դարաշրջանի Հայաստանի մշակութային կյանքը ներկայացնող լուսանկարներ:

*Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ*
*Պատմական գիտությունների թեկնածու*

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
**Հրատարակիչ՝**
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբոլցյան
**Գրանցման վկայական՝ 624**
**Խմբագրության հասցեն՝**
Մայր Աթոռ Սբ Էջմիածին
**Հեռախոս՝ 517197**
**Էլ.փոստ՝ qh@etchmiadzin.am**
Ստոր. տպագր.
30.06. 2010 թ.
**Տպաքանակը՝ 2100**
**Գինը՝ 50 դրամ**